

564
565

3

Ա. ԲՈԶԴԱՐՅԱՆԻ

ԳԵՂԱՐԿԵՍԸ

ԵՒ

ՅԱՆԻԱՐ ԴԱՄԱԿԱՐԳԻ

Թարգմանութիւն ԽՈՐՀՆ ԼՈՐՆՑԻ
Յանելած. Ա. ԿԱՐԻՆԵԱՆ «Հին և նոր գնդարեսութ»:

701
F - 78

ՄՈՍԿՎԱ—1920

21 OCT 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈԴԻՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԻՆ ԳՈՐԾ
ՆԵՐԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՈՒԹԵԱՄԲ ԼԱԵՄ ԵՎ ՏԵՍԵԼ:

- 1) Ռ. Սոց. Քեդ. Խորհր. Հանքապետութեան Սահմանադրութիւնը:
- 2) Ա. Լենին. «Նամակ Ամերիկան բանուորներին»—գինը՝ 3 թ.
- 3) Ա. ՔԲԴՀ. «Պոլիտառաջական պրեզիդենտ»—գինը՝ 6 թ.
- 4) ՀՀ-ՀԵՆԻՆ. «Քթեսալից յանուր» (Զննուցում Խորհությունի 5-օդ Համագումարին)՝ գինը՝ 6 թ.
- 5) ՆԵՐՀԱԿ. «Դէպիրե Բազուծ» Հ. 6. Դաշնակցութիւնը և Բաղդի Խորհրդային Էշխանութիւնը—գինը՝ 3 թ.
- 6) Ա. Լենին. «Առաջ Մարզը» (Համառող կնօսացութիւնը և Յաքարիցի շաբադը)՝ գինը՝ 10 թ.
- 7) ՆԵՐՀԱԿ. «Առուսական Յեղափոխութիւնը և պրոլետարժամանի ամփեազմի»—գինը՝ 3 թ.
- 8) Ա. ԲՈԽԻՄԻՆ. «Կոմմունիստական Պատակցութիւնը»—գինը՝ 20 թ.
- 9) ՊԱԼԵՐՈՎ. (Ա. Հ. Պալման) «Անշան և իր գերը համաշխարհային պատեզազմի մէջ»—գինը՝ 20 թ.
- 10) ԱՌԱ. ԽԵՆԴԻՆ. 1. «Կոմմունիստական Պատակցութիւնը Դերմանիսացում»: Ա. «Կարլ Լիբկենիստու» (Լիբկենիստի նկարով)՝ գինը՝ 1 թ.
- 11) ԱԽՈՐԻՇՔԱՋԻՆ Կառավարութեան նոտան Վիլսոնին՝ չինը՝ 1 թ.
- 12) «Միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրութիւնը»—գ. 3 թ.
- 13) Հ. ՅՈՎՈՒԹԵԱՆ. «Դեպի բազմացիական կույտ»—գինը՝ 1 թ.
- 14) Գ. ԶԱԽՈՎԱՆԻ, ՏԻ; ԿԸՄԵՆԵՆԻ և Լ. ՏՐՈՅՆԻԿ—«Ա. Լենին» (Ալա գիմիս Էլիչ Ալեքսանդրի)՝ գինը՝ 10 թ.
- 15) Գ. ՄԱՐ-ԲԱ և Փ. ԽՆԴԻՆ. «Կոմմունիստական Մանիթուամբ»՝ Պիկանուի, Կառլեկու և հեղինակիների առաջարանթույլ՝ գ. 10 թ.
- 16) Գ. ԼԵՓՈՎԻՆ. «Տեսահական Խովուցիսան և Կոմմունիզմ»—գ. թ.
- 17) ԿԱՐՄԻՆԱԿ. «Ո՞ւ բայ է Խորհրդադրիկ հշխանութիւնը և ինչպէս է նա կազմուում»—գինը՝ 1 թ.
- 18) «Թեանիսական Մէճ Յեղափոխութիւնը»—գինը՝ 6 թ.
- 19) Ա. ԴԵՐԻՃԵՆՅԵՆ. «Ենչչու վարել ժողովը»—գինը՝ 6 թ.
- 20) Ա. ԵՐԵՎԵՆԵՆ. «Սոցիալիստական Խորհր. Հանքագույնութիւն» գ. 5 թ.
- 21) ԿԱՐՄԻՆԱԿ. «Ո՞ւ բայ էր զուր դուզացի»—գինը՝ 1 թ.
- 22) Ա. ՎԱՐԱՆԵՆՅԵՆ. «Հայ փախուականներին»—(Ժրի):
- 23) ԲԱՐԱՄԱԿԻՆ. «Կոմմունիստական Պատակցութիւնը» (Յուլիկիների) ծրագիրը—գինը՝ 5 թ.
- 24) ԽՈՒԵՆԱՊԻՆԵԼԻ «Պատակցութիւն»—գինը՝ 3 թ.
- 25) Ա. ԼԵՆԻՆ. «Թէզիսներ Խորհրդուական պրոլետարժական զեմոկրատիայի մասին»—գինը՝ 3 թ.
- 26) «Հայուստանի Կոմմունիստական Առաջարանութիւն Անդրկայացու և Անձ զեկուցումը III Կոմմունիստական Խոտենացիսալին»—գինը՝ 60 կ.
- 27) «Առուսական Բնակչության ամենամեծ ամենու աշխարհի պրոլետարիան»—գինը՝ 3 պար.
- 28) Ա. ԼԵՆԻՆ. «Երբուոյ Խոտենացիսալի տեղը պատճենահան մէջ»—գինը՝ 3 թ.
- 29) Ա. ԼԵՆԻՆ. «Ենչչ պէտք է լինի մեր կառակցութեան առունեց—գինը՝ 1 թ.
- 30) ՊԱՆԻԿՈՎԻ. «Թալանի տաժառումը» գինը՝ 3 թ.
- 31) ԿԱՐՄԻՆԵՆՅԵՆ. «Եճակերի սիրու և Արմենիա»—գինը՝ 10 թ.
- 32) Ա. Արմեր Աստղ—գինը՝ 1 թ.

ԹՈՒՍԱՑ. ՍՈՅԻԱՀՆՈՑ. ՓԵՂԵՐԱՑԻՒՆ ԽՈՐՀՐԴԱՑՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՑ.

701
Բ-78
Ա. ԲՈԴԴԱՆՈՎ

Պրոլետարներ բոլոր երկների, միացէք.

ԳԵՂԱՐԻԵՍԸ

ԵԿ

ԲԱՆԻՈՐ ԴԱՍԱՐԳԻ

Թարգմանութիւն ԽՈՐԾՆ ԼՈՐԾԻ

Յանձնական Ա. ԿԱՐԵՍՈՅՆ ՀՀՀԱ, Ա. Ա. Պաղարանստիր:

4346
5246

№ 47

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԻ

ՄԱԾԿԱՆ—1920.

№ 47

05 MAR 2013

564

Ի՞նչ է ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՆ.

I.

Պրոլետարական պոեզիան ամենից առաջ պէո-
եդիա է, որոշ տեսակի գեղարւետ:

Զկայ պօեզիա, ինչպէս և առհասարակ չկայ
գեղարւեստ ախտեց, որտեղ չկան ինքանի պատ-
հերներ: Եթէ բազմապատկման աղիւսակը կամ
Փիզիկալի օրէնքները շաբադքնը որե է սահուն
ու ծշակւած ստանաւորով, պոեզիա չի լինի այդ,
որովհետեւ վերացական հասկացողութիւնները կեն-
դանի պատիերներ չեն:

Պոեզիա, ինչպէս և գեղարւեստ չկայ նոյնպէս
և այնաեղ, որտեղ չկայ ներդաշնակութիւն պատ-
կերների զուգացութեան մէջ, փոխադարձ համա-
պատասխանութիւն և կապ նրանց միջև,—այն, ինչ
որ «կազմակերպուածութիւն է կոչւում»: Եթէ,
օրինակ, նկատւած կերպարանքները շաղկապւած
չեն պլանի միութեամբ, կամ, եթէ նրանք դասա-
ւորւած են պատահականորէն, անկանոն կերպով,
այդ դէպքում դրանք պատիեր, կենդանի պատիեր
չեն:



3262-84

Ամիսներ առաջ մի թերթում տպւած էր մի
ոտանաւոր, որ ալսպէօ էր սկսում.

«Կոյւ մինչև վերջ, կոյւ միշտ անվերջ»—
Գոռում է շշմած դրպանքն աղալի.
Զոհի արեան հետ նա հէչ գործ չունի,
Միան մէ շահով կույն վերջ լինի:
Չեռնարկու տղան էլ դրպանը տռուղ
Բանւորներին է խարում սուս ու փուս և
այլն:

Խճրազրութեան կողմից լանցանք է մի ալսպի-
սի ոտանաւոր տպելը,—լանցանք և՛ ընթերցազի և՛
հեղինակի, որևէ տնկեղծ, աղնիւ բանւորի հանդէպ,
որը պարզապէս չէ պոեզիան:
Սլսուել կամ բոլորսվին չկան. կենդանի պատկերներ
«շահով պիտի վերջ տալ պատերազմին», («Չեռնար-
կու աղան սուս ու փուս խարում է բանւորներին)
կամ այդ պատկերները խիստ հակասում են իրար
(«Գրպանները դռուում են» և այն էլ «շշմած»):
Սու ասես, լատկապէօ դրուած մի նմուշ է այն
բանի, որ գեղարւեստայնութեան հակագիր է:

Պէտք է իմանալ և լիշել,—գեղարւեստը կեն-
դանի պատկերների կողմակերպութն է, պոեզիան
կենդանի պատկերների կողմակերպութն է բանաւոր
ձեռով:

Պոեզիալի սկզբնաւորումը պէտք է վնասընկ
այնակաղ, որտեղ սկիզբ է առնում նաև մարդկալին
լեզուն ընդդիանըապէս:

Լարւած աշխատանքի ժամանակ նախապատ-
մական մարդու ակամայօրին արձակած ճիչերը,
աշխատանքի ճիչերը—բառերի սաղմերն էին, առա-
ջին ձայնանիշերը (օբօնաւում) այդ ճիչերը բնա-
կան ու ամենքին հասկանելի նշաններն էին այն
դորժողութեանց, որոնց պահին հնչում էին նրանք:
Եւ աշխատանքալին նոյն այդ ճիչերը աշխատանքութեան էին երգի սաղմերը դարձան:

Սոսկ խաղ կամ զռւարնալիք չէր այդ երգը:
Ծնդհանուր աշխատանքի մէջ նա միացնում էր աշ-
խատաւորների ջանքերը, նրանց ներդաշնակութիւն
ուիթմէք նշառութիւն և կապակցութիւն էր հա-
զորդում. Հետեւապէս այդ երգը կոլեկտիվ ջանքերի
կազմակերպման մի միջոց էր: Իր այդ նշանակու-
թիւնը նա պահպանում է նաև այժմ:

Ռազմական երգի—որ աւելի ուշ է զարդացել
կազմակերպչական նշանակութիւնը հանդէս է գա-
լիս ուրիշ երանգով: Սովորաբար այն երգում էին
նակատամարտից առաջ և նակատամարտի համար
ստեղծւում էր ներդաշնակ տրամադրութեան կոլ-
լեկտիվ զգացմունքի կապ, որ համերաշխ,
կազմակերպւած դորժողութեան հիմնական պարմանն

է պատերազմում: Աս, այսպէս ասած՝ կոլեկտիվ
ոլժերի նախապատրաստական կազմակերպութիւնն
է՝ նրա առաջ դրւած գժւարին նպատակին հառնե-
լու համար:

Պոեղիալի երկրորդ արմատն՝ առասպելն է. ա-
ռասպելն նաև դիտութեան սկիզբն է ընդհան-
քապէս:

Սկզբում բառերը մարդկալին գործողութիւն
եին նշանակում. բայց մարդիկ հենց միայն այդ բա-
ռերով կարող էին իրար հաղորդել արտաքին բնու-
թեան երեսովների ու գործողութեանց, նրա տա-
րերալին ոլժերի մասին: Ելդապատճեան իւրաքանչիւր,
նոյն իսկ ամենատարբական պատմւածքում կամ
նկարագրութեան մէջ բնութիւնն անխուսափելիօ-
րէն մարդկայնացւում էր. հարցը էենդանուն վերո-
բերւէր, թէ՛ ծառին, արեին թէ լուսնին, գետին
թէ առւակին, բոյոր գէպերում էլ այնպէս էր
գուրս գալիս, թէ խօսքը մարդու մասին է. արե-
գակը «գնում է» երկնքով, առաւոտեան «վեր է
կենում», երեկոյեան «գնում է քնելու», ձմրանը
«հիւանդանում, նիհարում է», գարնանն «առողջա-
նում» և այն: Գաղափարների այս ակամայ տեղա-
փոխութիւնը մարդկայինից տարրերալին կոչում է
«հիմնական փոխարերութիւն» (основная мета-
фора): Առանց դրան մտածողութիւնն չպիտի կա-
րողանար սկսել իր աշխատանքը շրջապատի, ար-

տամարդկալին աշխարհի վրայ, դոլանար իմացողու-
թիւնը:

Աւելի ուշ մտածողութիւնը կամաց կամաց
իւրացրած էր իր և արտաքին միջավայրի միջև եղած
տարրերութիւնը, ազատագրուում հիմնական փոխա-
րերութիւնից, յակապէս այն ժամանակ, երբ ար-
դէն ծշակւած էին, առարկան երի անունները:
Բայց այժմ էլ իրապէս մտածողութիւնը լիովին
ազատ չէ դրանից: Նոյն խսկ հենց ոռուսերէն „ՄԻՐ“
(աշխարհ) բառը մէկն է նրա մնացորդներից, որով-
հետեւ իսկապէս նշանակում է համայնք, մարդկալին
կոլեկտիվ: Իսկ պոեղիալի մէջ հիմնական փոխարե-
րութեան գերը խոշոր եղել է և է: Բանասաեղծա-
կան միջոցներից զիխաւորը բնութեան մարդկայնա-
ցումն է:

Այսպիսով սկզբում առասպելների մէջ մտա-
ցածին ոչինչ չկար: Երբ հալրը որդուն հաղորդում
էր արեկի և նրա տարրեկան շուրջկալութեան մասին
իր փորձով իմացածը, աստղագիտական այդ նախ-
նական գասախօսութիւնն անխուսափելիօրէն մար-
դու, արկածների պատմութեան ձեւն էր ընդունում,
— մարդու, որ հզօր է և բարի իր առաջ մերթ նա-
հանջող, մերթ լաղթանակող, մերթ նրան ուժաս-
պառ անող թշնամական ոլժերի գէմ մզւող պայ-
քարի մէջ և այն: Յետագայում սրանից զարդանում
էր բանասաեղծական որևէ առասպել — բարելացի-

ների առասպելը Գելքամիշ Աերոսի մասին, յոների առասպելը Հերակլեսի մասին։ Եթէ մի մարդ հաղորդում էր մի աւելի նւազ փորձառու մէկին, որ մեռած գիտները վնասում են կենդանի մարդկանց, ուժասպառ են անում նրանց, և նոյն իսկ մահացու հիւանդաւթիւններ են առաջացնում, — դրանից ստացւում էր մի պատմուածք չար մեռելների և դէպի կենդանի մարդիկը նրանց ունեցած թշնամութեան մարդին, — այն, ինչից լետագալում սաեղծւեց վամպիրների կամ զոռնափշտիկների (յոպիր) առասպելը։ Այն ժամանակներում դա Յր դի աւելի քններ հաղորդելու միակ նարաւոր ձեւն հասրակութեան մէջ։

Պոեզիա, պրոզա, գիտութիւն, — այս ամենն անբաժանօրէն խառնուած էին մի անորոշ սաղմի մէջ, ինչպիսին էր նախնական առասպելը։ Բայց նրա կենսաւկան իմաստը, նրա նշանակութիւնը հասարակութեան համար միանդամայն որոշ է։ Սա ևս մարդկանց սոցիալական աշխատաւոր կեանքի կազմակերպման գործիք է։

Ինչու համար է ժողովում, սերունդների շարքերին հաղորդւում մարդկային գիտելիքը մարդկանց իսկ կեանքի ու բնութեան մասն։ Նրա համար, որ այդ գիտելիքն համակերպեն, նրա համապատասխան ուղղեն ու միացնեն, ընդհանրապէս նրա համար, որ նրա հիման վրա կազմակերպելու մարդկանց գործիքը է։

ալ են մարդկանց գործնական ջանքերը։ Արեգակի նախնական առասպելը — տարւայ եղանակների յաջորդականութեան նկարագրութիւնը — անհրաժեշտ գեկավարող ցուցմունքներն էր տալիս երկրագործական աշխատանքի ջրանապառներան, ինչպէս նաև որսորդութեան մէնորսութեան, այն ամենի մասին, որոնց կաղմակերպումը յենուում է աշխատանքի կանոնաւոր բաշխման վրայ, բայտ տարւայ եղանակի և բայտ «ժամանակի բերման»։ Մեռելների առասպելը մեռած գիտների նկատմամբ տուողապահական միջոցներից օգտւելու ցուցմունքներ էր տալիս. օրինակ. նրանց բաւականաչափ խոր թաղել, բնակարաններից հեռու և ալլն։ Այն ժամանակւայ գործնականի մէջ պրիմիտիվ բանաստեղծական, գիտելիքը նոյն կաղմակերպիչ դերն էր խաղում, ինչ գերու նորագոյն սուրյու գիտութիւնները ժամանակակից արդիւնաբերութեան մէջ են խաղում։

III.

Էապէս փոխւել է արդեօք այն ժամանակներից ի վեր պոեզիակի կենսական նշանակութիւնը։

Մտաքերենք, թէ հին Յունաստանի համար ի՞նչ են եղել Հոմերոսի, Հեսիոդի պոեմաները, — դաստիարակչական կարևորագոյն միջոցներ։ — Իսկ ի՞նչ է դաստիարակութիւնը։ Հիմնական կաղմակերպ-

չական աշխատանք է դա, որ նոր անդամներ է մտցնում հասարակութեան մէջ:

Մարդկալին անձնաւորութիւնը մշակուում և նախապատրաստուում է հասարակական կապերի համակարգութեան պիտանի և կենդանի օգակ դառնալու ընդհանուր սոցիալական պրոցեսում իր տեղը գրաւելու և իր գործը կատարելու ուղղութեամբ: Քաստիարակութիւնը մարդկալին կովկատիվը կազմակերպում է ճիշտ նոյզէս, ինչպէս զինավարժութիւնը, կարգապահութիւնը և պատրագմական պրիոների ուսուցումը բանակ է կազմակերպում:

Մեր թէօրենտիկոսները, որոնք արիոտոկրատակոն և մասամբ էլ բուրժուական աւանդութեանց համաձայն՝ գեղարւեսար ռէկեանքի զարդարանք,» կեանքի իւրաւեսակ պէտքանք են համարում, չեն հասկանում, թէ իրենք իրենց որքան են հակառամ, երբ միենոյն ժամանակ գեղարւեսարին դաստիարակչական, ալոինքն՝ հէնց գործնական-կազմակերպչական նշանակութիւն են վերսղբում:

Բուրժուական երկու թէօրիա կայ «զուտ գեղարւեսարի» և «քաղաքացիական գեղարւեսարի» Առաջինը պնդում է, թէ գեղարւեսար պէտք է ինքնանպատակ լինի, պէտք է ազատ լինի մարդկալին գործնական պալքարի շահերից ու մզումներից: Երկրորդը կարծում է, թէ նա պէտք է կեն-

սագրժի ալդ պալքարի պլոդրեսսիվ աենդենցները: Փանի որ մենք հետազօտում ենք, թէ ինչ է իրօք գեղարւեսար մարդկութեան կեանքում, կարող ենք ուրեմն ալդ երկու թէօրեաներն դէն գցել: Գեղարւեսար կեանքի ոլմերը կազմակերպում է միանդաման անկախ նրանից՝ իրեն համար քաղաքացիական նախատակներ առաջադրում է, թէ ոչ հարկ չկայ լրանց գեղարւեսարի զզին փաթաթել գեղարւեսականութեան համար դա մի ճնշող, աւելորդ ու վնասակար բան կլինի. գեղարւեսատագէտը ընդունակ է աւելի կենդանի պատկերներ ներդաշնակործն ստեղծել այն ժամանակ, երբ ալդ անում է ազսորէն, առանց հարկադրութեան ու ցուցմունքն Բայց անհեթեթութիւն կլինի նաև արգելել, ու գեղարւեսան քաղաքահան, սոցիալ-մարատիան Խոտիվներ վերցնի. նրա բովանդակութիւնն ամբողջ կեանքն է, առանց սահմանափակութերի ու արգելքների:

«Գեղարւեսարի «ամենազուտ» ընագաւառը՝ ըրնարեգութիւնն է, անձնական արամազդրութեանց ապրումների, զգացմունքի գեղարւեսարը: Կարօղ էր հարց լինել, թէ ում և ինչ կարող էր նա սոցիալապէ կազմակերպել:

Թէ ընարերգութիւնը միայն գեղագէտի անձնական ալբումներն արտայալեր և ուրիշ ոչ մի բան, բացի դրանից, նա ոչ ոքի հասկանալի ու

հետաքրքիր չէր լինի, — գեղարւեստ չէր լինի: Նրա
իմաստն այն է, որ նա վերաբարադրում է բազմա-
թիւ տարրեր մարդկանց ընդհանուր տիպի արա-
մադրութիւններն, վերաբարադրում է նրանց հոգե-
կան յուղումների լարերն ու հարազատ կապակցու-
թիւն մարդկանց առ չևպարզաբանելով ու ուսա-
բանելով այդ բնդիանուրը՝ պոեար զդացմունշի բը-
նագաւառում անտեսանելիօրէն նրանց համախմբում,
ի մի է ձուրում փոխտղարձ ըմբռնման նոյնու-
թեամբ, միասնութեամբ, այն «կարեկցութեամբ»,
որ նա յարուցում է բոլոր մարդկանց մէջ: Եւ միա-
ժամանակ նրանց հոգու այդ կողմք պոեար դա ս-
տի արա կում է միատեսակ ուղղութեամբ — մի
բան, որ խորացնում եւ ընդարձակում է նրանց
հոգեկան մերձաւորութիւնը, նրանց խմբական, սոց-
իալական և դասակարգալին կուսակցութեան կա-
յունութիւնը: Իսկ այդ նախապատճառաւում ու զար-
գացնում է կապակցւած, միաբան գործողութեանց
հնարաւորութիւնը, այսինքն, այստեղ էլ, նչպէս
քիչ առաջ ռազմական երգերի առիթով, կատե-
ղինք խօսքը վերաբերում է կոլլեկտիվի ոլմերի
որոշ նախապատճառաւում կաղմակերպութեան,
որն այս կամ այն կերպ պիտի արտայալա նրա
ընդհանուր կեանքը, ընդհանուր պայքարը:

Իսկ այն պոեղիան, որ կեանքն է պակերա-
ւորում, նկարագրում, ինչպէս վիպերգութիւնը,

դրսման, վէպը ալգախսին, իր կազմակերպչական
նշանակութեամբ գիտութեան է նման, և մարդ-
կայն փոխյարաբերութիւնների խնդրում, նախ-
կին փորձառութեան հիման վրայ զեկավար դեր է
կատարում: Այսպէս, դիւցազներդական պօեմները
տալս են մասսայական գործողութեանց կենդանի
պամփերներ, պատկերաւորում են հերոսների կամ
առաջնորդների ու նրանց ետևելու գնացող ամբոխին
կապրը, ժողովրդական կոլլեկտիվ ոլմերի պայքարն
ու աշտութիւնը ևալլն: Վէպերի մեծ մասը, այն է
նրաց վիպականիզմը, կոնկրետ օրինակներով ներ-
կալիցնում են միննոխ տիպի խնդիրների լուծումը
թէ ինչպէս տարրեր պարմաններում աղածաբդկանց
ու անանց անհատականութիւններից տարրական
կազմկերպութիւններ են ստեղծւում, ընտանիքի
ձեռ ապա տարրեր անհատներն ինչպէ՛ս են հա-
մակրպւում շրջակայ մարդկանց, սոցիալական մի-
ջավլիքին: Դրաման գործողութեանց միջացով տա-
լիս: Կազմակերպւած միջագէպեր ու նրանց լու-
ծուր ևալլն: Մեր օրերին պօեղիան և ընդհա-
նրակէս գեղեցիկ դրականութիւնը յամենայն գէպս
քամքի բնակչութեան համար դատիարակելու,
այսիքն՝ մարդկալին անձնաւորութիւնը սոցիալա-
կան կապերի համակարգութեան մէջ մտցնելու,
դրէկ ամենատարածւած ու ամենանշանաւոր մի-
ջոց է:

IV.

Ժամանակակից հասարակութիւնն զասաւարդերի է բաժանւում: Դրանք կոլեկտիվներ են, որ իրարից անշատւած են բազմաթիւ կենսական հակասութիւններով, ուստի և կազմակերպւու են բաժան բաժան, անլարեր միջոցներով, մէկը ընդէմ միւսի: Բնական է, որ նաև նրանց կազմակերպչական գործիքները այսինքն, տեսաբանութիւնները տարրեր են, առանձին-առանձին են, շատ բանքրով ո՛չ միայն չեն համապատասխանում իրար, այլև ուղղակի անհաշա են միմիանց հանդէպ: Այդ ոյնք վերաբերում է նաև պոեղիալին, դասակարգին հասարակութեան մէջ սա և դասակարգալին է— կալւածատիրական, դիւղացիական, բուրժուակին, և պրոլետարական:

Հասկանալի է, այս բնաւ չպէտք է ըմբռել այն մտքով, որ պօեղիան պաշտպանում է այլ կամ այն դասակարգի շահերը. այդպէս լինում է երեմն, բայց համեմատաբար հաղւագիւա դէպքերում ատհապէս քաղաքական, քաղաքացիական պօեղալի մէջ: Բայց ընդհանրապէս նրա դասակարգալին բրնութն աւելի խօրին է: Բանաստեղծը կանգած է որ ոշ դաստիարգի տեսակէտի վրա. աշխարհին նայում է նրա աչքերով, մտածո՞ւ և զգում է ճիշտ այնպէս, ինչպէս այդ յատուկ կրա սոցիալական բնութեանու հեղինակ—անձնաւու-

թեա տակ թագնւում է հեղինակ-կոլեկտիվը, հեղինակասակարգը. պոեղիան նրա ինքնահանաչութեա մի մասն է:


Եղինակ-անձնաւորութիւնը թերեւս բնաւ չի էլ մածում այդ մասին, զուցէ բոլորովին գլխի էլ չի բնում այդ մասին: Դրւածքների մէջ իսկ, նրանցդասակարգալին աղբիւրի մասին յաճախ չկալ որ և ուղղակի ակնարկ, որ և է լիշատակումն: Սնայրինակ մետի ընարերդութիւնը: Այդ գեղցիպոեղիան, որի մէջ կեանքի բնութեան արտայառութիւնները գեղցիցօրէն շաղկապւում են իր իսկ ետի հոգեկան նրբին շաբժումների հետ, առաջին եացըից «զուտ գեղարւետի» նմուշ է թւում, որ հու է սոցիալական ամեն տեսակի աստափից, եւ ու ամենալիւ, այն ժամանակ երբ Թուսիալումբըսիզմ չկար, կային մարդիկ, որոնց կարծիք «աղայական պօեղիա» էր այդ: «Աղայական», այսին կալւածատիրական պօեղիա, որ ներշնչուած մեր երկրի որոշ դասակարգի արամադրութեա պարագաներով, կեանքի ու մաքի ձներով: Եւ աւի, այդ արդպէս է:

Ն խորը, լիակատար հրաժարումը ամեն տեսակիւթական, անտեսական, պրոզալիկ հոգսերիբով շնչում է մետի ընարերդութիւնը, հնարա է միայն զուտ աղայական, կալւածատիրակալութրութիւնից միշտ աւելի ու աւելի հե-

ռացող տարբերի համար։ Նոյն իսկ այն ժամնակ զարգացող բուրժուազիան, զբաղւած լինելով խստակի մրցութեան հոգուրով, տողորւած լինելով դորժնական մթնոլորտի ոգով, չեր կարող արգէս մշակել իր նրբացած զբացմունքները. բացի այդ, նա, որպէս քաղաքային դասակարգ, ընդունա չեր այնպէս ըմբռնել անպէս զգալնօրէն իւրացները նութիւնը, ինչպէս զիւղացիական հողատէլալածատէրերը։ Եւ դժւար չէ տեսնել, որ արդպօնիքան, արդարե, պէտք է կազմակերպիչ ուժանդիմութեանը կալւածատիրական դասակարդի հար, որն ժամանակ արդէն իր կեանքն ապրեէր, բայց, հասկանալի է, դեռ չեր կամենում հետալ պատմութեան թուտերաբեմից և եռանդուն երազվ պաշտպանում էր իր շահերը։ Նա ո՛չ սին միացնում էր իր հասարակական որոշ տրամադրեամբ կալւածատիրութեան ներկայացուցիչնն, այլև, դբա հետ միաժանակ, անուղղակի կերպ հակազրում էր մնացած հասարակութեան և բարի նկատմամբ հոգեկան գերակշռութեան գիցութիւնը, հետևապէս նաև ամբապնդում էր հասարակական միւս ւերի նկատմամբ հոգեկան գերակշռութեան գիցութիւնը, հետևապէս նաև արտօնեալ վիճի իրաւունքը. կարծես նա նրանց ասում էր. աթէ մենք ինչպիսի հստէափական, բարձր արար ներ ենք, որքան քնքոյշ ու նրբացած են մեր

զիները, որքա՞ն ազնիւ է մեր կուլտուրանու եւ պատեղից ինքնին բղխում էր այդ կուլտուրան, այսինքն նրա հիմնական պայմանները, նիւթական դանձերն և իշխող գրութիւնը, հաստատակամ ու միաբան կերպով պաշտպանելու ձգտումը։

Դասակարգալին հասարակութեան մէջ պոեզիան չի կարող արագասակարգացին լինել. բայց ըրանից չի հետեւում, որ իւրաքանչիւր արւել զէպքում նա պատկանում է որոշ գասակարգի։ Օրինակ. Նեկրասովի պոեզիայի մէջ կալ և գիւղացիութեան շահերի շերմ պաշտպանութիւն՝ նրա կեանքի խորք կարեկից ըմբռնողութեան վրայ հիմնուած և զարդացող, բայց այդ զարդացման մէջ հին կարգերից ճնշւած քաղաքային ինտելիգէնցիայի ձգտումների, մաքերի, զգացմունքի վառ արտալայտութիւն՝ ինտելիգէնցիայի, որին, ըստ իր գործունեութեան պատկանում էր նեկրասովը ինչպէս նաև նրա պոեզիայի մէջ կալին անկառածելի մնացորդներ կալւածատիրական դասի, որից նա դուրս էր եկել, Այս պոեզիան՝ խառը՝ գասկար գալարին է։ Մեր օրերին մնմ մասամբ ալզպէս է լինում նաև գենոկրատական պոեզիան զիւղացիա-ինտելիգէնտական, բանւորա-գիւղացի - զիւղացիական, բանւորա-գիւղացի - ինտելիգէնտական։ Այս հեշտ կարելի էր ցոյց տալ ժողովրդից ելած մեր նարագոյն պոետներից շատերի երկերում։



3262-84

Համկանալի, է որ պրոլետարիատին պէտք է ո՛չ
թէ այդպիսի, այլ զուտ դասակարգավին, պրոլե-
տարական պոեզիա:

V.

Պրոլետարական պոեզիայի ընողթը որոշում է
հենց իր բանւոր դասակարգի կենսական հիմնական
պայմաններով—նրա վիճակով արտադրութեան մէջ,
նրա կազմակերպութեան տիպով, նրա պատժական
բաղդռով:

Պրոլետարիատն աշխատող, շահագործում է
պայքարող, զարգացող, զարգացող դասա-
կարգ է, մի դասակարգ, որ մտածաներով
կուտհւած է քաղաքներում և որին լա-
տուկ է աշխատակցութեան ընկերա-
կան ձեր: Այս բոլոր գծերն անխօնափելիորէն
անդրադառնում են նրա կոլլեկտիվ գիտակցութեան
—նրա տեսաբանութեան, հետեապէս և նրա պոե-
զիայի մէջ: Բայց ոչ այդ բոլոր գծերը հաւասար
չտիով բնորոշում են պրոլետարական պոեզիան,
առանձնացնումն այն ուրիշ տեսակի պոեզիաներից:

Աշխատանք շահագործում աիրող դասակար-
գերի կողմից, պալքար նրանց դէմ, լառաջադիմու-
թեան ձգտում,—այս ամենը բաժանում է արդիւնք
պրոլետարիատին, աղքատ գիւղացիութիւնից, աշ-
խատաւոր ինտելիգենցիայի վարին խաւերից: Ակ-

ներևորէն, ոչ դրանք յատակ են, նաև այդ խմբակ-
ներին, դրանք նրանց մօտեցնում են բանւոր դասա-
կարգին: Այդ խմբակներն աւելի վաղ, քան պրո-
լետարիատը՝ կարողացան ստեղծել իրենց պօեզիան
և բանաստեղծական ստեղծագործութեան նաև
պարզի վրայ արած իր առաջին քայլերը անելիս՝
պրոլետարիատը բնափանաբար յարում է նրանց:
Այսաեղ նրա վորձերը դեռ անորոշ դասա-
կարգութիւն բնութ ունին: Նրա պոեզիան յեղա-
փոխական գեմոկրատական է: Ահա օրինակ մի գե-
ղեցիկ երգ, որ երթափարդ բանւոր Ալէքսէլ Գմի-
րեր տարիներ առաջ գրել է առժանակիրների բան-
տում:

ԱԼՈՒՅԻՆ

Դէպ արևն ենք քայլում անկանգ, քայլում ենք,
Աղատութեան կարմիր երգ ենք երդում մենք:
Ա, զնդոցումով երգն է շաչում երկրում, տե՛ս,
Զարթեցնում, ահաբեկում կուի պէս:

Զայն է տալիս սրտով, հոգով հպարտին
Հումկու վազով հոսում երկրում անձնելին:

Դէպ արեն ենք քայլում անկանգ, քայլում ենք,
Աղատութեան ալ դրօշ ենք տանում մենք:

Մե կոթերով դրօշն է մեղ սգանիշ.
Ի՞նչ դիւրին է, լու է լինել դրօշակիր:
Մենք ներկել ենք դրօշն արիւնովն արևի,
Որ գառւում է, յըում չարը խտարի:
Մենք քալլում ենք և դրօշն է մեր վերև,
Ալ երգով ենք բռնել համբան դէպ արև:
Ծանր է ուղին, լի է և մահ և ատատակ,
Բալց կարմրագոյն, որպէս չկայ երկնի տակ:
Երկար է նա, ձիգ դարաւոր ու ահեղ,
Բալց ամենից վաեմ, մաքուր ու անշեց:
Անհամար չենք, մենք դեռ շատ չենք բալց
համբին:
Մեղ կյարեն միլիոններով անվեհեր:
Մենք կտանենք արիւն, դրօշ, կեանք ու բեռ—
Խելագար ենք, բալց անմահ ենք, ինչպէս սէր:
Թող կորչեն միշտ լաց ու հանգիստ շիրծի մօտ.
Յառաշ, լառաշ, ով սիրել ալդ, առաւօտ:
Մենք քալլում ենք արևի դէմ, միշտ քալլում
եւ երգում ենք և ալ դրօշ ենք տանում:
Այստեղ, բացի հեղինակի անձնաւորութիւ-
նից չկայ ոչինչ, որ այս երգն լատկապէս պը ո-

լ ետարական դարձներ: Այս երգը բանւորի
հետ հաւասարապէս կարող էր յեղափախական
խանդավառութեամբ ոգեսորել առաջաւոր ինտելի-
գէնցիալի նախկին մարտիկներին—նարոգավոլցնե-
րին, ինչպէս և հողի ու աղատութեան համար
պալքարող գիւղացիական մարտիկներին: Եւ տյ-
պէս էք հին յեղափոխական պոեզիալի մեծագոյն
մասը, միւնոյն է ինտելիգէնտական, գիւղացիական
թէ բանւորական միջավարից էր նա դուրս եկել:

VI.

Ինչ որ էապէս բաժանում է միւս դեմոկրա-
տական տարրերից, դա նրա աշխատանքի և աշ-
խատակցութեան առանձնալատուկ տիպն է:

Մարդու աշխատաւոր բնութեան մէջ ամե-
նախոր ճեղքւածն առաջացաւ այն ժամանակ, երբ
«ողիզը» բաժանւեց բանւորական ձեռքերից,
«զեկավարութիւնը» կատարումից, երբ մէկը սկսեց
մտածել ու վճռել միւսների փոխարէն, հրահանգ-
ներ տալ նրանց, իսկ միւսներ՝ անել այն, ինչ որ
ցոյց կատար և ինչպէս կերտմալի ալդ մէկը: Դա կազ-
մակերպողի առանձնացումն էր կատարողից, սկիզ-
բը իշխանութեան—նպատակման: Մէկը միւսի
նկատմամբ դարձաւ բարձր արարած, և սաեղծւեց
խոնարիստ զգացումը: Այս հիմունքի վրայ
սկսեց զարդանալ կրօնական աշխարհայեցողութիւ-

Նր. իսկ առաջ այդ չկար և չեր էլ կարող լինել, որովհետև աարերբալին բնութիւնն իր ահարկու ոյժերով մարդու մէջ լարուցում էր անասնական վախ, բայց ո՞չ «Երկիր զն Աստուծոյ», երկիր հզօր թշնամիների հանգելա, բայց ո՞չ միտք—սրակով բարձր գործիչների մասին,—մի միտք, որ միացած է կու հնազանդութեան ու խոնարհութեան հետ, առանց որին կրօն չկայ: Իր աճման ու խորացման հետ աստիճանաբար աւտորիտար գործակցութիւնը ներշնչում էր մարդկանց բովանդակ գիտակցութիւնը հեղինակութեան ոգով: համայն բնութիւնը ենթարկւած էր իշխանաւոր կազմակերպողներին—աստւածութեանց, իւրաքանչիւր մարմնի տրւած էր մի առաջնորդող—հոգի և ալին: Իր աշխատանքի բնոյթով իսկ կազմակերպիչն արդարե, օրակով աւելի բարձր տիպ է, քան կատարողը: Մեկը պէտք է հրապարակ բերէ նախաձեռնութիւնն իմացականութիւն, դիտելու, հսկելու, ընդունակութիւն, որ պահանջում է և՝ փորձառութիւն, և՝ գիտութիւն, և՝ ներզօր ուշադրութիւն. միւսը մեքենական կատարող է, որին պէտք չեն այդ բոլոր տւիալները, այլ պէտք է պասսիվ կարգապահութիւն և կոյր հպատակութիւն: Գործ կատարելու ժամանակ սարուկը, նորար, հին բռնապեաի բանակի զինորը պէտք չունեին

դատողութիւններ անել այդ նոյն իսկ վնասակար էր, նա կենդանի գործիք էր, ուրիշ ոչինչ:

Մարդու աշխատաւոր բնութեան միւս ներքին պառակտումը—մասնաւոր միա գիտացումն է: Իւրաքանչիւր մասնագիտ իր նպատակն ունի, իր փորձառութիւնը, իր առանձին փոքրիկ աշխարհը. երկրագործը նանաչում է իր դաշտը, արօտը, ձին. գարբինն իր հնոցը, փուքոր, մուրճը, կոշկակարն՝ իր կաշին, մտիաթը, կաղապարը: Ամեն մարդ չի կարող,—բացի այդ չի ել կամենում իմանալ ուրիշի գործը, որպէս-զի աւլի լաւ հնարաւորութիւն ունենալ կենարունանալու իր գործի վրա, աւելի տիրապետելու այն: Եւ այդ պառակտումն աւելի է խորանում մասնագիտացած տնտեսութեանց առանձին և անկախ լինելուց,—տնտեսութեանց որոնք իրար հանդիսակւում են միան շուկայում, իրենց ապրանքների փոխանակութեան ժամանակ: Այստեղ նրանց փոխագործ կապը վերջապէս ծածկւում է այն պայլարով, որ բոլորը մզում են—ընդգէմ բոլորի: Բուրգը՝ ծախողի գէմ զնի համար, վաճառականներն՝ իրար գէմ ապրանքների վաճառման համար, գնազներն՝ իրար գէմ անհրաժեշտ տպրանքի համար, երբ չկայ այն բաւական չափով:

Աշխատանքալին բնութեան այս երկրորդ պառակտումից առաջ է գալիս անհատապաշտու-

թիւնը: մարդ սովորում է մտքով ու զգացումներով իրեն հակադրել ուրիշներին՝ նա իրան բացարձակապէս առաջին արարած է համարում, որ իր բոլորովին առանձնայատուկ շահերն ունի, որ իր ձգտութերով ու դործերով, անկախ է հատարակական միշտավարից, որ մի ինքնուրոյն ստեղծագործսղ անհատ է: Անհատը, անձնական «ես»-ը աշխարհայեցութեան ու աշխարհազդայցութեան կենտրոնն է, նրա համար, իսկ այդ «ես» ի ազատութիւնը նրա բորձրագոյն իդէալը:

Աշխատաւոր բնութեան այս երկու պառակտութերն էլ անցնում են հին դասակարգերի բովանդակ գիտակցութեան, հետեւապէս և նրա պոեզիայի միջով: Զուտ աւտորիտար աւատականութեան դարաշրջանի պոեզեան մինչև ուղն ու ծուծը ներշնչուած է հեղինակաւորութեան ոգով, նրա առասպեկներն ու պոէմաները, օրինակ Պրիաների «Փիրք Արարոցը» լուների Իլիականն ու Ոգիսականը, հեղիկների Մահաբհարաթը, ռուսների՝ „Слово о полку Игореве“-ն, —կեանքի ամբողջ ընթացքը նրա անցքերի շղթան մարմաւորում են աստւածների, հերոսների, թագաւորների, պարագլուխների գործունէութեան մէջ, ընարերգութիւնը (գրա վառ օրինակն են Դաւթի սաղմուները) զգում է բնութիւնը, որպէս աստւածալին կամքի արտալայտութիւն, և ներշնչուած է աղաչանքով ու հնագանդութեամբ: Բուր-

ժուախան աշխարհի պոեզիայում իշխում է անհատապաշտութիւնը: այնուեղ կենտրոն է հանդիսանում անձնաւորութիւնը, նրա բախտը, նրա ապրութերը: պօեման, դրաման, վիպը պատկերացնում նրա ընդհարութերն արտաքին աշխարհի հետ, նրա վերաբերումը ղեպի ուրիշ մարդիկ ու բնութիւնը, նրա պայքարը բախտի ու դիքը համար, նրա ստեղծագործութիւնը, լաղթանակները, պարտութիւնները: ընարերգութիւնը նոյնպէս միանդամայն դործ ունի անհատական հոգեբանութեան, առանձին անձի հոգեկան լոյզերի և արածադրութեանց հետ: Նրա բնութեան սուրեկտիվ զգացողութիւնը, նրա ուրախութիւնները ախրութիւններ, ցնորքներ, լուսախարութիւնները, սեռական սէրը իր տառապանքներով ու հիացութերով: — այս է ահա այդ ընարերգութեան բովանդակութիւնը:

Հարկ է նկատել որ բուրժուական աշխարհի պոեզիան աւտորիտար գիտակցութիւնից շատ բանի պահպանում, որովհետև բուրժուական աշխարհն աւտորիտար աշխատակցութիւնից, իշխանութիւն — հապատակութիւնից շատ տարրեր է պահում իր մէջ: Բացի այդ — բուրժուական խմբակների բազմազանութիւնը — խոշոր ու մանր կապիտալիստներ, բարձր ինտելիգէնցիա, լետութեանց ու լառաջադիմական կալուածատէրեր, բորսային օպենկուլիանտներ, բենտատէրեր և այն, — այս խմբակների զա-

կազմակերպչի առանձնալյատիութիւններն են
Բայց մնում է նաև անմիջական ֆիզիքական նիզը,
ուղեղի հետ միասին աշխատում են ձեռքերը:

Միևնույն ժամանակ մասնագիտացումը ևս դա-
գարում է աշխատաւորներին խօսորէն բաժանել
իրարից, — նա նրանից փոխադրուում է ձերենակի
վրայ տարբեր մեքենաների վրայ կատարող աշխա-
տանքն իր հիմնական, «կազմակերպչական» բավան-
դակութեամբ շատ նույնաման է: Դրա շնորհիւ
միարան աշխատանքի ժամանակ պահպանւում է
փոխադրձ ըմբռնողութիւնը և գործակ ու խորհր-
դով իրար օգնելու հնարաւորութիւնը: Այստեղ
դոցանում է աշխատակցութեան այն ընկերական
ձեր, որի վրայ պրոլետարիատը լիտագայում կա-
ռուցանում է իր բոլոր կազմակերպութիւնները:

Այդ ձեր բնօրոշուում նրանով, որ մի է ձու-
լում կազմակերպչական և կատարողական աշխա-
տանքները Բայց այստեղ ինչպէս կազմակերպիչներ,
նոյնպէս և կատարողներ հանդէս են դալիս ոչ թէ
առանձին անհատները, այլ կոլլեկտիվը: Գործերը
միասին քննուում են, ու լուծեւում, միասին ել կա-
տարուում: Ամենքը մասնակցում են կոլլեկտիվի կամքի
աշակեան ու նրա կատարման: Այստեղ իշխանու-
թիւն— հպատակութիւնով չէ որ կազմակերպու-
թիւն են ձեռք բերում, այլ դրանց փոխարին
գործում է ամենքի ընկերական նախաձեռնութիւնն

նազան խառնուրդների և խաչաձեռնութեանց հետ
միասին բնականօրէն ստեղծում է նրանց պոեղիալի
բազմապիսի ձեւն ու բովանդակութիւնը, թէև հիմ-
ական տիպը մնում է ընդհանուր:

VII.

Մեքենային արտադրութեան մէջ առաջին
անգամ կցորդուում են տշխատաւոր բնութեան հիմ-
նական պառակտութեալր: Այստեղ «աշխատաւորա-
կան ձեռքերը» սոսկ ձերքեր չեն, աշխատաւորը
մեքենական պասսիվ գործակատար չէ: Նա ենթար-
կուած է, բայց միաժամանակ կառավարում էլ է
«երկաթէ սարսւկին» մեքենան: Որքան բարդ և
որքան կատարելագործւած է մեքենան, այնքան
աւելի աշխատանքը պէտք ունի հսկումի ու կոն-
տրոլի, նրա բոլոր կողմերի ու պայմանների
ըմբռնուման և նրա միջամառութեան հարկ եղած չա-
փով միայն նրա շարժութեալրին: Իսկ նրա երրեծ-
նակի անխօսափելի քմահաճութեանց և խանդար-
ման ժամանակ անհրաժեշտ է իսկոյն ըմբռներ ի՞ն-
չումն է բանը անհրաժեշտ է գործողութեան նա-
խաձեռնութիւն ու վեռականութիւն: Այս ամենը
կազմակերպչական աշխատանքի հիմնական և
տիպիկ գծերն են, և գրանց հետ նոյնպէս կատարած
են օրոշ գիտութեան, ինտելլիգէնտութեան, լարուած
ու շաղրութեան, ընդունակութեան պահանջներ, որ

ու ղեկավարութիւնը, իւրաքանչիւրի ընկերական կարդապահութիւնը:

Ընկերական աշխատակցութեան սաղմերը կային և առաջ բայց մէր դարաշրջանում առաջին անգամ նոյն մասսայական է դառնում և հանդէս է գալիս, որպէս մի ամբողջ դասակարգի կազմակերպման հիմնական տիպ: Նա խորանում է բարձր տեխնիկայի զարգացման հետ զուգընթաց, նա ընդլայնում է քաղաքներում պրոլետարական մասսաների կուտակման հետ զուգընթաց խոշոր ձեռնարկութիւնների մէջ նրանց կենտրոնացման հետ զուգընթաց:

Քաղաքներում ու գործարաններում պրոլետարիատի այս հաւաքումը խոշոր և բարդ ազդեցութիւն է ունենում նրա հոգերանութեան վրայ Դրա օգնութեամբ զարգանում է այն գիտակցութիւնը, որ աշխատանքի մէջ, տարերքի ու կեանքի դէմ մղւող պայքարի մէջ անձնաւորութիւնը մեծ շղթալի մի օղակն է միայն, և՝ առանձին վերցրած՝ նա միանգամայն անզօր խաղալիք կլինէր արտաքին ոլմերի ձեռքին, հզօր օրդանիզմից բաժանւած մի կտոր անկենսունակ հիւսուածք: Անձնական «եսը» ստանում է իր խսկական չափերն ու պատշաճ տեղը:

Սակայն քաղաքներում ու գործարաններում տեղի ունեցող այս կուտակման հետ կապւած է

նաև խիստ հիւսանդագին անշատումը բնութիւնից: Վերջինս պրոլետարիատի համար մի արտադրական ոյժ է, բայց ոչ բազմերանդ, կենդանի տպաւորութեան աղբիւր: Այնինչ քաղաքի կեանքը նրան շատ քիչ ուրախութիւն ու հանուլըներ է տալիս, անհամեմատ աւելի քիչ, քան տիրող զասակարգերին. և այս հանգամանքն աւելի է զօրացնում նրա ձրգումը դէպի կենդանի բնութիւնը, որը նոյն խսկ ընտելեան կարօտ է դառնում: Սա էլ մէկն է նրա անբաւականութեան նրա՝ կեանքի նոր ձևերի համար մղուող պայքարի մռախիներից:

Ընկերական աշխատակցութիւնը մի պատրաստի ձև չէ. նա զարգացման ընթացքի մէջ է, ամենուրեք տարբեր աստիճանների վրայ Խսկ ընկերական գիտակցութիւնը ընթանում է նրա լիտերից, այնուամենայնիւ անհրաժեշտորար լիտ մնալով նրանից: Պրոլետարիատի ուղիի հիմնական գիծն է այս, բայց նա դեռ հեռու է աւարտութից ամենաառաջնակարգ երկիրներում: Աւարտումը տեղի կունենայ սոցիալիզմի օրով, որը ոչ այլ ինչ է, բայց եթէ՛ հասարակութեան բովանդակ կեանքի ընկերական կազմակերպութիւն:

VIII.

Հեղինակաւորութեան ողի, անհատապաշտութեան ողի և ընկերակցութեան ողի: — Կալուուրայի,

երեք հետևողական տիպերն են սրանք: Պրոլետարական պոեզիան պատճենում է երրորդ բարձրագոյն փուլին:

Նրան խորթ է հեղինակաւորութեան ողին, պրոլետարական պոեզիան չի կարող նրան թշնամի չլինել: Պրոլետարիատը հպատակ դասակարգ է, բայց պալքարում է ալլ հպատակութեան դէմ: Անսորական թերթից վերցրուած մի ոտանաւոր, որ նւրիւած է պրոլետարիատի քաղաքական առաջնորդներից մէկին:

Յեցւել է իմքից կարգն ունեսրաց,
Համարձակութեամբ աշխարհը լեցուն,
Խաղը հանճարի զիտում է լուզւած,
Որ ծափահարի լաջողւած պահուն
Տին կերտւածքների, փատժի անկման
Գալիք տօնին է աշխարհն սպասում,
Որ հիւսի ազատ օրերի շարան,
Յաւերժ պսակի լաղթող հանճարին:

Ալդ ոտանաւորը բանւոր է գրել՝ թէ ոչ, պարզ է, որ ալոտեղ զգացմունքների ու մտքերի հիմնական ողջ կառուցւածքը պրոլետարական չէ: Աշխատաւոր ու պալքարող կոլեկտիվը չի կարող չգնահատել իր կազմակերպիչ-առաջնորդներին, բայց կդնահատի որպէս կոլեկտիվի իսկ ընդհանուր պատակաների, ընդհանուր կամքի արտալարիչ-

ների, որպէս իր ընդհանուր ոլժի ներկայացուցիչների: Իսկ մեր գարաշրջանի մեծ դրաման ներկայացնել, որպէս մի համարձակ բաղդախաղ, որ հանճարը վարպետօրէն անում է հանդէպ քաղաքական ուրիշի խաղացողների, ըստ որում «աշխարհը», այսինքն մասսաները սլուզւած հետեւում» են նրան, որպէս-զի յետով ծափահարեն ու պսակեն լաղթողին: — դա մի զուտ աւտորիատը և նոյն իսկ պալատական բժրանումն է կեանքի:

Պրոլետարիատին նոյնչափ խորթ է և անհատապաշտութեան ողին, որ ամենուրեք կենտրոնական տեղ է յատկացնում անձնական «Աս»-են:

Ես եղել եմ միշտ ըմբաստ, Ես եղել եմ միշտ հպարտ,

Ժպտացել եմ ես վշտին, նետել իմ ցաւը մէկդին:
Միշտ եղել եմ մալիսեան, խնդութիւնու միշտ անափի,

Զի սոսկացել իմ հողին ստերներից դիշերին:
Ես եղել եմ միշտ հանգիստ, զուսպ եմ եղել համարձակ,

Արքեցել եմ արեսվ, արեին երգ եմ երգել:
Սուրբ գործի մէջ չպարտեց ինձ և ո՞չ մի հեծեծանք,

Ալրւել եմ միշտ հրից վառ իդեալների հնոցում:

• • • • •

Եւ միշտ ուղիղ, աներեր, միշտ համարձակ ու
միշտ պարզ
Հպարտ հոգով եմ քալլել դէպ ճշմարիտն ան-
խոռվ,
Ես չեմ ասել՝ «Դժւար է», «Վտանգաւոր»,
«Ճանթ է այս»,
Ապրել եմ յար յագեցած ազատ, ազատ պայ-
քարով:

Նոյնպէս բանւորական թերթից վերցրուած
այս ոտանաւորի առաջին տունը պատահմամբ չէ
գրէթէ ամբողջապէս փոխ առւած ակնյալաօրէն
բուրժուական պոետից, ինչպէս և շարունակու-
թեան մէջ քիչ չեն նայնպէս, փոխ առւած պատ-
կերները: Այստեղ՝ հիմքում չկայ կոլլեկտիվ, ստեղ-
ծագործական («մենքը»), ալ կայ միան հին, ինքնամ-
փոփի, ինքնամիրահար («ես»)-ը: Ի հարկէ, սա ևս
պրոլետարական պոեզիա չէ:

Պրոլետարիատը շատ երիտասարդ դասակարգ
է, իսկ նրա գիղարւեսար դեռ մանկական շրջանումն
է: Նոյն իսկ քաղաքականութեան մէջ, որ նրա փոր-
ձառութիւնն աւելի մեծ է, գերժանիալի, Անգլիալի,
Ամերիկալի միլիոնաւոր պրոլետարները դնում են
բուրժուազիալի փեշից բռնած, ալդ աւելի հեշտ
պէտք է պատահի պոետ-պրոլետարների հետ:

Սակայն, ինչպէս այնտեղ մենք պէտք է բա-
ցարծակօրէն յայտարարենք. «Սա պրոլետարական

քաղաքականութիւն չէ», - նոյնպէս այստեղ բնկերա-
կան քննադատութեան ձախը պէտք է հաստատա-
պէս նախադգութացնի. «Սա պրոլետարական գե-
ղարւեսա չէ:

Մինչ այժմ բանւորների պոեզիան շատ յա-
նախ, հաւանաբար մեծ մասամբ — դեռ բանւորական
պոեզիա չէ: Խոնդիրը հեղինակը չէ, ալլ տեսակէտք:
Պսեսը կարող է և տնտեսապէս չպատկանել բա-
նւոր դասակարգին. բայց եթէ նա խորապէս ներ-
շնչուել է նրա կոլլեկտիվ կեանքով, ճշմարտապէս
որ անկեղծօրէն առօրուել է նրա ձգտումներով,
իդէալներով, նրա ժառանձման եղանակներով եթէ
նա ուրախանում է նրա խնդութիւններով և առն-
չւում նրա առուապոնքներով, — մի խօսքով, եթէ
նա հոգով ձուլւել է նրան, — նա ընդունել է պրօլե-
տարիատի գեղարւեսական արտակայտէչը, բանաս-
տեղծութեան մէջ նրա ոյժերի ու զիաակցութեան
արտայալտիչը լինել: Հարկաւ. կարող է այս յանախ
չպատահել, և պօեզիալի մէջ աւելի քիչ քան քա-
ղաքանութեան մէջ պրոլետարիատը պէտք է յու-
զնի դրսից եկող դաշնակիցների վրայ:

IX.

Անա բանւոր պոետի և տնտեսագէտի մի փոք-
րիկ արձակ բանաստեղծութիւնը:

ՍՈՒԼԻՉՉՆԵՐ

Բանւորական թաղերում հնչում են սուլիչները: Դա բնաւ Մտրկութեան կոչը չէ: Դա աշխագալի երգն է:

Երբեմ մենք աշխատում եինք խղճուկ արհեստանոցներում, և առաւօտեան սկսում եին մեր աշխատանքը դանաղան ժամանակ:

Իսկ հիմտ առաւօտեան ժամը ութին ճչակները սուլում են մի ամբողջ միլիոնի համար:

Ամբողջ միլիոնը միևնուն ակնթարթում իր ձեռքն է առնում մուրճը:

Մեր առաջին զարկերը հնչում են միասին:

Իսկ ի՞նչ են երգում սուլիչները:

Միութեան վաղորդեան հիմն է այդ:

(«Բանւորական զարկի պոեզիան»—Ա. Գաստերի—Ի. Թօզորովի):

Սա քնարերգութիւն է, բայց ո՛չ անձնական ռեսիւ-ի քնարերգութիւն: Բանւորի համար, որպէս առանձին անձնաւորութիւն, հարկաւ, սուլիչները լուշարար են անազատ աշխատանքի, որ յանախ գրեթէ տանջանքների գործիք է: Բայց անող կոլեկտիվի համար այդ ուրիշ բան է: Պոեզիալի «սուրիեկար», նրա խսկական ստեղծագործողը, որ իրեն արտալայառում է պոեզի միջոցով, այն չէ, ինչ

առաջ և այն չէ դանում կեանքի մէջ, Սա ընկերակցութեան ոգին է:

ԳԱԼԻՔԻՑԻՆ

Ականչ արի այդ երգերին մօտ և ուրախ դարերի—Մեծ բացերնս քաղաքների սուր գիշերում խննթ ու յաղթ.

Ականչ արի այդ երգերին ոսկի, գալիք օրերի, երբ գործարան, պողպատ ու փոկ ճչացին չար ու վայրի: Ես ընկերիս մի օր տեսա ոսկի - պողպատ կոելիս, Մէկին ի մէկ գալիք այզի հուր - երեսը բացելիս: Ու հասկացայ, որ աշխաբհի իմաստութիւնն այս մօւրճի՝

Այս պողպատէ, յամառ, վստահ ձեռքի մէջ է ձայն տալիս:

Զիլ կռանը որքան ուժգին զարկ է, փշրէ ու կռէ, Նոյնքան խինդը վառ կփալի այս մշուշոտ աշխարում Որքան թափով շարժւեն անծալը անիւներն ու մեքենան,

Նոյնքան գերող փալ կստանան մեր օրերն ու ապագան:

Այդ երգերը երգել են ինձ միլիոնաւոր ձայն ու խոց, Միլիոնաւոր կապտարանկոն դարբիններ յաղթ ու եռուն:

Այդ երգերը - հասկ զնզոցներ - տիրող, կարմիր, պարզ զնդոց,

Մեծ գիշերի պազ երազի վերջն են դւարթ աւետում:

Ակտ երգերը - կարող կանչեր դէպ կեանք, արև ու
պալքար,-

Ցասկոտ, հպարտ մի մարդակոչ՝ բախախն տարտամ
ծանր ու չար:

Այստեղ հանգիս է գալիս և պօեափ «Եսը».
բայց նա պարզ է գիտակցում իր տեղն ու իր
զերը նա հանդէս է դալիս նրա համար, որ մատ-
նանշէ այդ պօեղիալի իսկական քեթողին՝ կոլլեկ-
տիվին, իսկական ստեղծագործական ոյժը՝ կազմա-
կերպւած աշխատանքը: Եւ պօեար կանդ չի առ-
նում պրոլետարիատի զուտ ռազմական, մարտական
լեզափոխական գիտակցութեան վրայ, ինչ որ մեծ
մտստմք պատահում է ներկայ սկսնակ բանւոր
պոետների հետ: Նա միայն մի բան չէ որ տալիս
է պրոլետարական պոեղիալին, — չէ՞ որ մարտական
ընկերակցութեան ոգին յատուկ է և զինւորներին:
Պոետն աւելի հեռուն ու խորն է գնում. նա բա-
ցում է իր դասակարգի կուլտուրական - աշխա-
տանքալին գիտակցութիւնը. «Զիլ կռանը որքան
ուժդին զարկէ, փշրէ ու կոէ, ...որքան թափով
շարժւեն անծայր անիւներն ու մեքենան...—նոյն-
քան շուտ վրայ կհասնի Արշալոյսը, նոյնքան մօտ է
Գալիք թագաւորութիւնը: Կոիւներում յաղթա-
նակ թշնամիների դէմ, բայց միայն աշխատանքի
զարգացման, արտադրական ոլմերի զարգացման մէջ
է սոցիալական իդէալի իրականացումը:

X.

Հետախուզողին անհրաժեշտ է մի ուեալ լե-
նակէտ: Դժւարին զրութեան մէջ էինք մենք,
պրոլետարական գեղարւեստի այն ժամանակւայ
սակաւաթիւ պրոպագանդիստներս քանի որ խօ-
սում էինք այնպիսի բանի մասին, որ մեզ չէր յա-
ջողլում գործնապէս գտնել, որի մասին կարողա-
նալինք հաստատ ու համոզւած ասել. «Ահա, սա է
իսկական պրոլետարական պոեզիան. այս նմուշով
կարելի է դատել, սրանով կարելի է համեմատու-
թիւններ անելո: Ու չեմ կարող առաջ չբերել այն
զրւածքը, որ առաջին անգամ անձնապէս ինձ հա-
մար մի այդպիսի լենակէտ եղաւ:

„Պրավда“-ում կամ 1913 թւին նրան յաջոր-
դող թերթերից մէկում ապւած էր Սամորիտնիկի
մի փոքրիկ ոտանաւորը —

ՆԱՐ ԸՆԿԵՐԻՆ

Պատւող անիւի հոսող մըրիկ,
Կտաշղի փոկերի հասկ պար...
Է՞ յ ընկեր, մի՛ ստրկանար:
Թող սուլի քաօսը պօզպաա,
Թո՛ղ թէ ծավ արցունք է քամել,
Թո՛ղ թէ շատ կրակ է մարել—
Մի՛ ստրկանար,

Թողել ևս ցօղազարդ երկիր,
Գետերք. դաշտերը պայծառ.
Է՞լ, ընկեր, մի՛ ստրկացիր,
Զուլել են հեռուներն անծալը,
Եղել է ողջ անկարելին..
Գալիքի ջինջ արշալուխին—
Մի՛ ստրկացի՞ր:

Մեր բախտը եղել է արդէն
Ալեհեր բաշերի վրայ.
Վշտերի, ստւերի երկրում,
Արեր վառւում է փարթամ.
Ալրուում է աւելի ուժգին—
Մի՛ ստրկանար:

Գրանիթ-հասկերի նման
Դու կանգնիր վալրի փոկի մօտ
Թող ուժգին ճչալ մեքենան.
Եղթալին ձուլւեց նոր օղակ,
Եւ վաշտը սերտ է աւելի.
Մի՛ ստրկանար:

Բանը գրւածքի դեղարւեստականութեան մէջ
չէ. անպայման ուժեղ տաղանդ ունի նա. սակայն
ուղ տաղանդը դեռ զարդացած չէ, ալլապէս ձեն
աւելի կատարելագործւած կլինէր. Բայց բովանդա-
ւելի կատարելագործւած կլինէր ապշեցնում է. դժւար թէ
կութեան մաքրութիւնը ապշեցնում է.

կարելի լինի պրոլետարօրէն դրանից աւելի ուժեղ
կերպով զգալ ու մտածել:

Դէպքը աեղի է ունենում հին կարգերի ժա-
մանակ: Գործարանում վարձւել է զիւղից դեռ
նոր եկած մի նորեկ գեղջուկ. ի՞նչ է նա բնածին,
վաղեմի բանւօրի համար. մրցակից և այն էլ խիստ
վտանգաւոր մրցակից, նա իշեցնում է աշխատա-
վարձը, շնորհիւ իր պահանջների ցածր մակարդա-
կին և նոյնիսկ ինքնիրան, էլ չենք ասում, ընդհա-
նուր շահերը պաշտպանելու անկարութեան: Այդ
շահերի մասին նա դեռ գաղափար անդամ չունի.
Նրա միտքը ժանր է, զգացմունքը՝ նեղ, կամքը՝
սահմանափակ և աշխարհայիկացքը՝ խղճուկ... Եւ
եթէ ալսօր—վաղը կարիք զգացւի ընկերական միաց-
եալ գործողութեան: Դժւար է յօս դնել նրա վրայ:
Բայց նայեցէ՞ր, թէ այդ գեռ օտար, պատահական
եկտորին ինչպէս է վերաբերում նրա ընկեր պոետը:

Որպիսի՞ ասպետական ուշադրութեամբ, որ-
պիսի՞ նուրբ հաղատարութեամբ նա սիրտ է տա-
լիս նորեկին և նրան մացնում անժանօթ, անհաս-
կանալի, տարօրինակ, նոյն իսկ նրա համար սար-
սափելի աշխարհը: Ինչպիսի՞ պարզութեամբ, ուժ-
ուղնութեամբ, խտացած խօսքերով, բայց վառ-
պատկերներով պոետը նրան պատմում է այն բո-
լորը, ինչ որ նա պէտք է զգայ ու իմանայ՝ ընկեր-
ների մէջ ընկեր դառնալու համար: Նա պէտք է

իմանայ ու զգալ և ժամանակակից աեխնիկալի
«պողպատէ քաօսի» վիթխարի ոլժերի գրանդիոզ
պատկերը, և մարդկութեան այնքան թանգ նստած
դառն նշմարտութիւնը, «ծով արցունքների» մա-
սին, և ուրախ աւետիքը մեժ իդէալի «հզօր որե-
ւի» մասին, ընդհանուր պայքարի հպարտ երջան-
կութեան մասին: Յուզիչ են լիշտութիւնները
հիասքանչ, հեռաւոր բնութեան, «խաղաղ ցողերի»,
պարձառ վտակների, դաշտերի» մասին: Քարերի
ու պողպատների մէջ պրոլետարի սիրան ինչպէս
է կարօտում նրանց և հազլազիւտ հանդիպում-
ների բերկրանքն ինչպէս անմատչելի է նրան!
բայց կոլեկտիվ-ստէդագործական կամքն իր տճող,
աննկուն, անպարտելի ջանքերով կհասնի այդ ամե-
նին... յաղթական վստահութեամբ է հնչում վերջին
տունը.

«Եզրակին ձուլւեց նոր օդակ,
Եւ վաշտը սերտ է աւելի—
Մի՛ սարկանար»:

Սոցիալիստական իդէալի ասպետութեան նոր
կղրօր Թօնն է այս:
Միթէ իր դասակարգի կազմակերպիչը չէ
պոետը:

* * *

Պրոլետարական պոեզիան դեռ սազմի մէջ է:
Բայց նա կը զարդանալ: Նա անհրաժեշտ է, որով-
հետեւ բանուոր գատակարգին անհրաժեշտ է կա-
տարեալ, ամբողջական ինքնագիտակցութիւնը, իսկ
պոեզիան նրա մի մասն է:

Նա դեռ մանուկ շրջանումն է: Բայց պրոլե-
տարիտոր միայն նրանեավ չի ապրի, եթէ նա անի:
Պրոլետարիատն անցեալ ողջ կուլտուրալի ժառանգն
է, նաև ժառանգն այն բոլոր լաւագոյն բաների,
որ նա կգտնի աւտոտական և բուրժուական աշ-
խարհի պոեզիալում:

Սակայն նա պէտք է այդ ժառանգութիւնն
այնպէս ստանալ, ու չենթարկւի նրա մէջ թագա-
ւորող անցեալի ոգուն, ինչպէս որ այդ եղել է մին-
չև այժմ: Ժառանգութիւնը չպէտք է գերիշխէ
ժառանգին, այլ պէտք է նշա ձեռքին սոսկ գոր-
ծիք լինի: Մեռած բանը պէտք է ծառակէ կենդա-
նի բանին, և ոչ զսպէ, կաշիանդէ այն,

Եւ դբա համար էլ պրոլետարիատին պէտք է
ի՞ր պոեզիան: Բազմազարեան իր հասունութեամբ
ուժեղ բանաստեղծական օտար գիտակցութեան
չենթարկւելու համար՝ պրոլետարիատը պիտի ու-
նենալ իր պարզութեան մէջ անխախտ բանաստեղ-
ծական գիտակցութիւն: Այս նոր գիտակցութիւնը

պիտի ծաւալի և ստեղծագործող միութեամբ ընդ-
գրկի ամբողջ աշխարհը, ամբողջ կեանքը:

Ուրեմն թող անի ու հասունանալ պրոլետա-
րական պոեզիան, և թող բանւոր դասակարգին նա
սովորեցնի դառնալ այն, ինչ որ նրան նախասահ-
մանել է պատմութիւնը—լինել պալքարող ու կոր-
ծանող միայն արտաքին անհրաժեշտութիւնից դրդ-
ւած, ստեղծագործող՝ իր բովանդակ էութեամբ:

ԳԵՂԱՐԻԿԱՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

Գեղարւեստի բնագաւառում պրոլետարիատի
առաջ գրւած է երկու մեծ նպատակ: Առաջինը—
ինքնուրոյն ստեղծագործութիւնը—դիտակցել ինքն
իրան ու աշխարհը վայելուչ կենդանի պատկերների
մէջ, կազմակերպել իր հոգեկան կեանքը գեղարւեստա-
կան ձևերի մէջ: Երկրորդը—ժառանգութեան իւ-
րացումը—ալիքապետել անցեալի ստեղծած գեղար-
ւեստի դանիթերը, իւրացնել նրանցից այն բոլորը որ
մեջ է ու գեղեցիկ, չենթարկւելով նրանց մէջ ար-
տացուած բուրժուական ու աւատական հաստա-
կութեան սղուն: Այս երկրորդ խնդիրն առաջինից
նուազ գեւարին չէ: Հետազօտենք նրանց լուժման
ընդհանուր միջոցները:

I.

Լրջօրէն և ուշադիր կերպով օտար կրօնն ու-
սումնասիրող հաւատացեալլը ենթարկւում է նրա-
նից գերւելու կամ, իր սեփական հաւատի տեսա-
կետից որևէ հերետիկասական բան նրանից իւրաց-
նելու վուանդին: Այսպէս, քրիստոնեալ գիտական-
ները, բուդդայականութիւն ուսումնասիրողները,
յաճախ է պատահել, որ իրենք են դարձել միան-
գաման բուդդայականներ կամ բուդդայի բա-
րոյական ուսմունքի հետեւողներ. բայց եղել է և
հակառակը: Ենթադրենք, թէ միւնոյն կրօնական
վարդապետութիւնը ուսումնասիրում է ազատ մր-
տածող, որը բոլոր կրօնների մէջ տեսնում է ժողո-
վուրդների կրօնական ստեղծագործութիւնները,
լիակատար ճշմարտութիւնը չէ այս, այլ նրա մի
մասը: Արդեօք, սրան էլ որպէս հաւատացեալլի,
վտանգ է սպառնում: Ի հարկէ ոչ, նա կարող է
մեծագոյն հիացմունքով իւրացնել վարդապետու-
թեան գեղեցիութիւններն ու խորութիւնները, որ
նւաճել է հարիւր միլիոնաւոր մարդկանց, բայց նա
իւրացնում է այն ոչ թէ կրօնական, այլ ուրիշ,
բարձր տեսակետից: Բուդդայականութեան մէջ
կազմակերպւած մտքերի ու զգացմանց հսկայական
հարստութիւնը, հաւանարար աւելի շատ բան կը-
տայ նրա սրտին ու մտքին, քան քրիստոնեալ գիտ-
նականի սրտին, որն ուսումնասիրելով անկարող է

անշատել օտար կրօնի «գալթակղութեան» դէմ պայքարող իր ռեփական հաւատի զիմադրութիւնից: Բայց ազատ մտածողի համար այստեղ չկայ հաւատացեալրուդդական գառնալու գալթակղութիւն, որովհետեւ այդպէս չե նրա զիտակցութեան մեխանիզմը, որ վերամշակում է կրօնական նիւթերը իւրայատուկ կերպով:

թափելու նիւթի մասին յալտնաբերուած սաղիստական հրճւանքը, — զմբախտաբար տեղի է ունեցել նոյն իսկ այդ բանը: Տասկանալի է, որ երեսլիթները բանւոր գասակարդի դաղափարախօսութեան հետոչ մի առնչութիւն չունեն: Նրան յատուի են մարտական, բայց ո՛չ կոպիտ, զինւորական մոտիվներ, յամառ թշնամութիւն կապիտալի հանդէղ, որպէս սոցիալական ոյժի, բայց ոչ մանր քէն նրա առանձին ներկայացուցիչների իրենց հասարակական միշտավարի անհրաժեշտ արդասիքի դէմ: Տարկաւ, պրալիտարիատը պէտք է զէնքի դիմի, եթէ այդ պահանջում են նրա ազատութեան, նրա դարդացման, նրա իդեալի շահերը. սակայն նաև ի զուր չէ պայքարում այն սոցիալական տարրերի դէմ, որ ստեղծում է ամեն տեսակի սպառազէն պայքարը: Այն գաղանալին բանը, որ այդ պայքարը ստեղծում է մարդկանց հոգում, անշուշտ, ժամանակաւորապէս կարօղ է տիրապետել մարտիկների հոգերանութեան մէջ, բայց այդ գաղանալինը խորթ է ու թշնամի պրոլետարական կուլտուրալին, որը հանդուրժում է միտին հարկադրեալ դաժանութեան: Ծիտակ ոյժի ողին — ազնւութիւնն է, իսկ աշխատանքային կոլլեկտիվը՝ մի շիտակ ոյժ է: Նա պէտք է դառնայ կուլտուրայի նոր արիստոկրատիա, վերշնք, մարդկալին պատմութեան մէջ և առաջնը: որ լիովին արժանի է այդ անւան:

Պրոլետարական գեղաբւեստի համար ինտելիդենտական սոցիալիսմի կողմից մեր քննադատութիւնը մի սահմանադիմ ևս պիտի անց կացնի: Իդէալների մերձաւորութեան շնորհիւ այստեղ շատ բնական և առանձնապէս շատ հեշտ շփոթութիւններ են աեղի ունենում: Բայց և անպէս տարբերութիւնները խորն են ու կարևոր:

Աշխատաւոր ինտելիդենցիան դուրս է եկել բուրժուական կուլտուրայից, աշխատել է նրա հարաբերութիւն և դաստիարակել նրանով: Նրա սկզբունքն — անհատականութիւն է: Եւ հէնց ինտելիդենտական աշխատանքի բնույթն պահպանում է այդ տենտենցը. աշխանականի, գրողի, գերասանի գործերի մէջ աշխատակցութիւն անմիշապէս չփ դրացւեւմ, կոլեկտիվի գերը մնում է տեսողութեան դաշտից դուրս, գերակշռում է առանձնացման տրամաքին տեսքը, լիովին ինքնուրսն, անձնական գործունէութեան կուլտիվիան: Իսկ երբ գոյութիւն ունի ակներեւ աշխատակցութիւնը, սովորաբար ինտելիդենտը գրաւում է զեկավարի, գործ կազմակերպողի աւտորիւտ և պահպանութեանը. Փարբիկայում՝ ինժեները, հիւանատար գրութիւնը. Փարբիկայում՝ ինժեները, հիւանատար գրութիւնը՝ բժիշկը և այն: Այստեղից էլ բղխում է զանոցութ՝ բժիշկը և այն: Այստեղից էլ բղխում է հեղինակաւորութեան առարը, որ ընդհանրապէս հեղինակաւորութեան առարը, աշխարհում և նրա պահպանութեան է բուրժուական աշխարհում և նրա կուլտուրայի մէջ, որպէս նրանց հիմնական անիշխանականութեան կազմակերպչական լրացում:

Ծնորհիւ այս ամենի, մեծ մասամբ նոյնիսկ այն ժամանակ, երբ աշխատաւոր ինտէլիցիենտը բարձրանում է մինչև բանւոր դասակարգին անկեղծօրէն ու խորապէս համակրելու աստիճանին, մինչև սոցիալիստական իդէալին հաւատութու աստիճան, — անցետլը պահպանում է իր ովքը նրա մտածելակերպի մէջ, նրա կեանքի ընդունման մէջ նրա զարգացման ոլժերի և ուղիների ըմբռնման մէջ:

Օրինակ Վերնարնի «Արշալումներ» դրաման, որ ամենից առաջ է լիշատակւում երբ խօսք է լինում պրոլետարական թատրոնի թեպերտուարի մասին և որ հնարաւոր է համարւում, առանց որ և է մեկնութեանց ու կոմմենտարիաների, ներկայացնել պրոլետարական թատրոնում, որպէս միանգամայն պրոլետարական մի պիէս: Այդ սխալ է: Պիէսան դեղեցիկ է և մի թանկարժէք ժառանգութիւն է մեզ համաց, բայց այնուամենայնիւ՝ հին աշխարհից մնացած մի ժառանգութիւն: Այնաեղ սոցիալիզմի ողին պարուրուտծ է աւտորիտար-ինդիվիզուալիստական կեզեի մէջ, որը պէտք է հասկանալ և որ չի կարելի առանց այլևալլութեան ընդուներ: Ամենինչ կառուցւած է ժողովրդական տրիբունի հերոսական անձնաւորութեան վրայ, որը մասսաներին քաշում է իր ետեից: Նա պայքարի ու յաղթութեան հոգին է, առանց նրան մասսաները խաւարամիտ ու կոյր են, իրենց ժանապարհը գտնելու

անքնդունակի: Հեղինակի համար նրա ողբերգութիւնն ամբողջ պիէսի հետաքրքրութիւնն է կազմում: Հին աշխարհն ախտէս է ըմբռնում անձնաւորութեան նշանակութիւնը: Կոլլեկտիվիզմն այլ կերպ է կառուցում կեանքը, ուրիշ կերպ լուսաբանում է այն: Հարկաւ, նա ևս ընդունում է հերոսներին և, աւելին, նա ստեղծում է նրանց, բայց որպէս կոլլեկտիվի ոլժի մարմնաւորում, որպէս նրա ընդհանուր կամքի արտայալակիչ ոչի, որպէս նրա իդէալների մեջնոր ոյժ:

Իսկ որչափ որ առաջնորդների նկատմամբ ունեցած վերաբերութիւն այդպէս չէ, նոյնչափ էլ նշանակում է, կոլլեկտիվը չի հասունացել մինչև ինըն իրեն պարզորէն հանաչելու աստիճան:

Բեղդիական մեծ քանդակագործ է: Մեռնիէն, բանւորների կեանքն ու կենցաղը ներկայացնող իր անդրիներում տևել է աշխատանք իսկական պաշտամաւնքը: Բայց չնայած պատկերացւող նիւթի նկատմամբ դիղագետի ունեցած ամբողջ խորին սիրուն, չնայած նրա ողջ համակրական ըմբռնման, — զեռ ևս կոլլեկտիվի պաշտամունք չէ այդ: Երախտիքը լամենալին դէպս մեծ է: Սակայն պրալետար-դեղագետար պէտք է իմանալ, որ սա պատրաստի ձեռնարկ չէ նրա համար, որ նրա նպատակները գրանից հեռու են:

Բանւոր գասակարգի գեղարւեստական ինքնա-
գիտակցութիւնը պէտք է լինի պարզ ու լատակ,
խօրթ խառնուրդներից ազատ. սա մեր քննադա-
տութեան առաջին հոգոն է:

II.

Պրոլետարական գեղարւեստի մեր քննադա-
տութիւնն ամենից առաջ պէտք է ուղղի նրա բո-
վանդակութեան վրայ:
Երիտասարդ և նրա հետ միասին ծանր պայման-
ներում ապրող գասակարգի նորածին գեղարւեստին
լատուկ է բովանդակութեան յայտնի նեղութիւն
որ բղխում է փորձառութեան պակասից, գիտու-
թութեանց դաշտի հարկադրական սահմանափակու-
թիւնից: Այսպէս, գեղեցիկ գրականութիւնն այս-
տեղ սկզբում իր ամբողջ նիւթն ու թեմաները ա-
կամացից վերցնում է բանւորների իսկ կնյացազից,
մասամբ էլ նրանց հետ կապւած ինտելիդենտ յե-
ղափոխականների կեանքից. միայն հետզետէ մինչև
հիմա շատ անհշան չափով, նա ընդլայնում է իր
շրջանը: Այնինչ անկասկածելի է, որ պրոլետարա-
կան գեղարւեստն իր փորձառութեան սահմաննե-
րի մէջ պիտի առնի ամբողջ հասարակութիւնն ու
բնութիւնը, տիեզերքի բովանդակ կեանքը.

Այս խնդրում ի՞նչ կարող է անել մեր քննա-
դատութիւնը: Իհարկէ, նա անզօր է նորածին գե-

դարւեստին անմիջականօրէն տալ այն, ինչ նրան
պակասում է:

Բայց նա կարող է և պէտք է նրա առաջ միշտ
դնի նրա շրջանի ընդլայնման խնդիրը, կարող է և
պէտք է նկատի այդ իմաստով իւրաքանչիւր յաջո-
ղութիւն, մատնանշի նրա հետ կապւած նոր հնա-
բաւորութիւնները: Իսկ ամեն ժամանակ, երբ առիթ
ներկալանալ, նա ալլպիսի յաջողութիւններին ա-
նուղղակի, բայց իրական օգնութիւն դոյց տւած
կինի — պրոլետարական գեղարւեստի երկերը հա-
մագրելով հին գեղարւեստի՝ «գեղարւեստական դա-
դախարով» այսինքն՝ լուծւող կազմակերպչական
խնդրով համանման երկերի հետ: Այնտեղ այլ կի-
նեն և նիւթը, և գիտողութեան դաշտը, յաճախ՝ և
խնդրի լուծման սկզբունքը:

Սա առանձնապէս վերաբերուում է դասական
գրականութեան ամենասիրւած հարցերին՝ ընտա-
նիքի կաղմակերպման, մարդկային հոգու »բարձր«
և «սույն» մատիվների պալքարի, մարդու գերիշ-
խող կիրքի, ընաւորութեան դաստիարակութեան
մասին ևալն:

Գիտութիւնը, վիլիխովիալութիւնը յաճախ նոյն
կամ նոյնանման խնդիրներ են առաջադրել ու լու-
ծել: ըննադատութիւնը պէտք է այն մատնանշի ու
համազրի գեղարւեստական առաջադրութեան և
լուծման հետ: համամարդկային փորձի մեծ կոլեկ-

սիվիզմը, որ գիտութեան աշխարհի քողով է ծածկուած շատ դէպքերում թանկադին դեկավար կիրակուածն էրիտասարդ, որոնող ու տառանող ստեղծագործութեան համար:

Գեկարւեսական բովանդակութեան աղքատութիւնը կարող է կայանալ ո՛չ միայն կազմակերպող փորձը սահմանափակօրէն քնդգրկելու մէջ, այլ և նեղ, միակողմանի զգացողութեան, փորձի առաքելի հանդէպ եղած հիմնուկան դէպի վերաբերմւնքի սահմանափակութեան մէջ։ Այսոեղ առանձնապէս տիպիկ է չափից զուրս կտտարւող կենտրոնացումը սոցիալական պալքարի աեսակէտի վըայ, գեղարւեստին միայն կազմակերպութեամբ մարտական գերի լատիացումը։ Երիտասարդ ու պալքարող, և այն էլ ամենաժանր պարտգաներում պալքարող, դասակարդի համար անհրաժեշտ է այդ, նոյնիսկ անհրաժեշտ է դասակարդի զարգացման առաջին քայլին, երբ այդ դասակարդն ինքնորոշւում է՝ իրեն հակադրելով հասարակութեան ուրիշ դասակարդերի և մշակում է իր դաշտափարախօսութեան մարտական կողմը։ Բայց այնուհետև այդ տեսակետը նոյնպէս անխուսափելի էրապով անբաւարար է դառնում։

Բանւոր դասակարդը պալքարով է ընթանաւմ դէպի իր իդէալը, բայց աւերում չէ այդ իդէալը, ուլ կեանը նոր կազմակերպութիւնը, եւ այն էլ

չտեսնւած նոր, անչափելիօրէն-բարդ, անօրինակօրէն ներդաշնակի։ Հետեւապէս մարտական գիտակցութեան կուլտուրան ինքնին չի ընձեռում խնդրի լրւծման դիմաւոր միջոցը։ անհրաժեշտ է սոցիալ շինարարական տեսաբանութիւն մշակել։ Պրոլետարական գիտութիւնն արդէն ընթանաւմ է այդ ուղղութեամբ նոյն ուղղութեամբ պիտի զարգանայ նաև պրոլետարական գեղարվեստն այնքան աւելի մեծ եռանգով ու արագութեամբ, որքան աւելի բանւոր դասակարդն կմօտենալ իր իդէալի իրուգործման։

Մեր ժամանակակից պրոլետարական դեղարւեստի մէջ կտրականապէս գերակշռում է ագիտացիոն բովանդակութիւնը։ Դասակարգային պալքարի կոչող և նրա յաղթանակը փառաբանող հաղորաւոր ոտանաւորների, կապիտալին ու նրա սովորութեան դիմակազերծ անող հարիւրաւոր պատմուածքների մէջ կորչում է միւս բոլորը։ Պէտք է այս փոխեր Մասր չպէտք է ամբողջ լինի ճշմարիտ է, կեանը ի մէջ բազմակողմանի խորացումը աւելի դժւար է, քան թշնամու գիծը նեղքելու համար կատարւող գրոհը։ բայց սոցիալիզմի գործում նա աւելի ևս անհրաժեշտ է, որովհետեւ միայն կեանը, նրա կոնկրետ ոլմերի, նրա ճանապարհների բազմակողմանի ըմբռնումը լենարան կըն-

ձեռի նրա ամենապարփակ, դործնական ստեղծագործութեանը:

Պոեզիալի քաղաքացիական-ազիտացիան սահմանափակում աննպաստ կերպով է անդրագառնում պոեզիալի գեղարւեստականութեան վրայ իսկ որն, ըստ էռթեան՝ նրա կազմակերպող ուժն է հենց: Զարդանում է շաբլոնի տիրապետութիւնը, հազարաւոր կրկնութիւնների մէջ ինչպէս ինքնուրունութիւն պահանջել — և բթանում է համակրական դրացողութիւնը, որ միացնում է ճասան պոետի հետ:

Եհաոլ և եթէ բովանդակութիւնն արգէն աւելի է ընդարձակում այնուամենախնիւ, նա յաճախ դեռ ըմբռնում է նախկին տեսակէտով, աւելի նեղ կերպով, քան նա է իրօք: Ալապէս, Գաստելի մօկերքս լոլու տեսած զբքի մէջ երկի զլխաւոր նիւթը՝ մեքենական արտադրութիւնն է, նրա կազմակերպող ահաելի ուժը, այն կապը, որով նա միացնում է աշխատանքային կոլեկտիվները, և այն հրզորութիւնն ու տարերքի տիրապետութիւնը, որ նա տալիս է այդ կոլեկտիվին: Պրոլետարիատի Կուլտուրա - ստեղծագործ է զ ծ ա գ ո ր ծ ա կ ա ն գիտակցութեան գաֆանական գաֆարներից մէկն է այդ. իսկ Գաստելին իր գիրքն անւանել է «բանւորական հարւածի պոեզիա», կարծես նրա նպատակը պըոլետարիատի մարտական դիտակցութեան սահմաններից զուրս

չի գալիս: Քանզի ակներեւ է, որ «բանւորական հարւած» բառերն ամենքի մտքի մէջ, մանաւանդ մըրկու լեղափոխութեան պայմաններում առաջ կը բերեն սոցիալական ճակատամարտի պատկերը, բայց երբէ՛ք, օրինակ՝ մուրթի պատկերը, որն մեքենական տեխնիկայի համար ընդհանրապէս նույ անբաւարար սիմվոլ է:

Դեղարւեստական գաղափարների ազիտացիան սահմանափակումը արտայատում է նաև նրանում, որ կապիտոլիստներին ու նրանց լարակցւող բուժուական ինտէլիգենտաներին պատկերացնում են այնպիսի գոյներով, կարծես թէ այդ մարդիկ անձնապէս զատ են, դաժան, անպատիւ ևալին. Այս օրինակ ըմբռնումը նալիք է և հակասում է կոլլեկտիվիստական մտածման եղանակին: Խնդիրն այս կամ այն բուժժուայի անձնական յատկութիւնների մէջ չի, և լեղափոխական զդացմունքը, լեղափոխական նիկերը չպէտք է ուղղել առանձին անձանց դէմ: Խնդիրը գաստակարգերի գիրքերի մէջ է, և պայքարը մղում է սոցիալիստական սիստեմի, նրա հետ կապւած և նրան պաշտպանող կոլլեկտիվների դէմ: Կապիտալիստն անձնագիր է ամենապնիւ մարդը լինել. բայց որչափ նա իր գասակարդի ներկայացուցիչն է, նրա գործողութիւններն ու մաքերն անհրաժեշտաբար որոշւելու հն նրա սոցիալական գիրքով: Նոյնիսկ մարտական բաղխութեան բարդութեան մարդիկ

Ե լինի անկեղծ ու շխտակի Ո՞ւմ և ինչ կարող է կազմակերպել նա որին չեն հաւատում:

Ներկայ տարւաչ մայիս ամսում բանւորական թերթի մէջ գուր կարդում էք ալոպիսի մի ուսուառուր:

ԱՇՈՒՐՉ ստրիս տակ գարուն է, արե...
Մաղկունանց բոցով վառում է հեռուն:
Օնյայտ երազներ դարձան ակներն,
Նման սարերի կասարին անհուն
Հոգիներն ահա թռչում են միշտ վեր:
Հիասքա՞նչ օրեր, հեռունե՞ր անափ...
Դաշտում, պալարուն վտակների մէջ,
Բիւրեղ արշալոյս, վերջալուներում,
Թափով սլացող գնացքում ահա,
Դէմքի ժայռում, բոլիերում խօսքի—
Խինդն օրերի փայլում է հիմա,
Որպէս ծաղկի մէջ՝ հովանքը ոսկի:
Մինչև խորքերին էութիւնն անափ
Ալ խնդութիւնով ես լի եմ հիմա»... ևայն

Այն օրերին էք ալս, երբ մեր երկրում, արգարև, անիբագործելի երազեր իրականացան և բնգամին գերմանական իմպերիալիզմի խիստ «Կարմիր» երազները, որոնց խանգարելու ոլոր չուներ պրոիտարիատը: Մեր յեղափոխութեան ծանր ժարագործարիատը: Մեր յեղափոխութեան ծանր ժարագործարիատը:

պահին. գիտակից պրոլետարի համար նա թշնամի է ոչ թե, որպէս անձնաւորութիւն, ով որպէս մի կոյլ օգակ այն շղթալի, որ կոել է պատմութիւնը: Հին աշխարհը յաղթահարելու համար աւելի օգտակար է հասկանալ այն յանձին նրա լաւագոյն ներկայացուցիչների ու նրա բարձրագոյն արտայալութեանց քան երևակայել, որ այնտեղ միայն չար մարդիկեն ու վատ մոտիվներ: Բանւոր գասակարգի կոլեկտիվ միաքն ու կամքն չպէտք է ալդպիսի մանր-մունը բաներով գրադւի:

Ստեղծագործութեան նոյն ազիտացիոն սահմանափակման հետ սերտ կապակցութեան մէջ է նաև վերջերս երեան եկած մէջ թէորիա, որի համաձայն պրոլետարական դեղարւեստն անպայման պէտք է կենսուրախ ու յաղթական լինի: Դժբախտաբար նա, անկասկածելի յաջողութիւն ունի, մտնաւաճդ պրոլետարական ամենաերիտասարդ ու անփորձ պոետների մէջ թէև այդ թէորիան ալ կերպ քան մանկական, չի կարելի անւանել, կոլեկտիվ-գասակարգային զգացմունքի ձայնաշարք չի կարող և չպէտք է ալդչափ սահմանփակ լինի: Անտարակայս, աշխատանքային կոլեկտիվին յատուկ իր ոյժի կենդանի ու վառ զգացողութիւնը. բայց չպէտք է մոռանալ, որ երբեմն ոյժն էլ պարտութիւն է կրում: Գեղարւեստը, հենց որպէս կեանքի կազմակերպիչ, ամենից առաջ մինչև վերջ պէտք

Կովկասում, Ֆինլանդիայում, Մերձբալթիկում մեր հղբալըների անդատութեան օրերը, հսկայական ճնշող խնդիրների տանջող լողեածութեան օրերը մեր երկրում, քաղցի ու քալքալումի օրերը, —պատերազմի ամրողջ անիմեալ ժառանդութեան կատարեալ փթթման օրերը... Այս, լուսախարութիւնը պատւաբեր չէ մեր մարտիկների համար, բայց աւելի ևս անպատւարեր է վարդադոյն ակնոցների կեղծիքը, դա ուրիշ բան չէ, եթէ ոչ խուսափումն, փախուստ իրականութիւնից, նոյն լուսախարութեան կեղծ դիմակ...

Սա իշեցնում է պրոլետարական պոեզիան մինչև այն պոեզիայի աստիճանն, որն իրեն նշանաբան է ընդունել...

«Մեղ բարձրացնող խարէութիւնը մեզ համար թանկ է մանր ճշճարտութիւնների խռուարից»:

Ո՞չ ո՞չ թէ քաղցր փառաբանութիւններ, այլ աննկուն կամք, պատմական հպարտութիւն, —ահա թէ ինչ է պէտք բոլոր կողմերից թշնամիներով պաշարւած պրոլետարիատին.

Si fractus illabatur ordis
Impavidum ferient ruinae—

«Թող կտրծանւի աշխարհը—նա անվեհեր կդիմաւորի բեկորների հատւածները»: Ճին պոետ

ինդիվիդուալիստը դիտէր, թէ ինչ է իսկական արիութիւնը: Աւելի ևս ալդ պիտի իմանալ նոր կոլեկտիվի պոետը:

Իր ողջ կտրդաւորիչ աշխատանքի մէջ պրոլետարական ստեղծագործութեան մեր քննադատութիւնը պէտք է միշտ նկատի ունենալ մի բան այն է, որ աշխատաւոր կոլլեկտիվի զիգմի ոգին ամենից առաջ առաջ առարկա է նութիւնն է:

III.

Պրոլետարական գեղարւեստի քննադատութիւնը գեղարւեստի ձեւի տեսակետից պիտի հետամուտ լինի մի բոլորսին որոշ ու պարզ նպատակի՝ ալս ձեւի կատարեալ համապատասխանութիւնը բովանդակական գաղափարներից: Էնդ սմին ընտեսական առաջնորդութիւնը առաջ առաջ է իր նախորդներից: Էնդ սմին ընտեսական առաջ է գալիս գայթակողութիւնն վերցնելու, որպէս նմուշ հին գեղարւեստի մշակած ամենավերջին արդիւնքը: Այսական ախրութեամբ կարելի է սխալների մէջ ընկնել:

Գեղարւեստի մէջ ձեւն անբականիորէն կապւած է բովանդակութեան հետ, և այդ պատճառով էլ նրա ամենավերջին արդիւնքը միշտ էլ լիովին կատարեալ չի լինում: Եթի պատմական պրոցեսում

հասարակական գասակարգն, իր պրոդրեսսիվ զերը կատարելով, թէքւում է գեպի անկում, այդ ժամանակ իշնում է նաև նրա գեղարւեսափ բռվանդակութեան մակարդակը. իսկ բովանդակութեանը յարմարելով, հետեւում է և ձեր: Տիրող գասակարգի այլառեռումը սովորաբար կատարւում է պարագիտիզմին անցնելու հիման վրաբ Դրան յաշրդում է լագեցումը, կեանքի զգացողութեան բթացումը: Նրանից գուրս է զալիս նոր, զարգացող բավանդակութեան աղբիւրը—սոցիալ-ստեղծագործական գործունեութիւնը. կեանքն ամայանում, կորցնում է իր «բանական», արմինքն յառաջապէս ոոցիալական իմաստը: Ամայութիւնը աշխատում են լցնել նորանոր վայելքների, նորանոր զգացողութեանց որոնումով: Գեղարւեսար կազմակերպում է այդ որոնութենքը մի կողմից՝ մարող զգայականութեան դրդումն ու դիավ նար ընկնում է գեկադանական յեղաթիւրման մէջ. միւս կողմից է սթիթիքական քմբունութիւնը: Այդ բոլոր մէկից աւելի անգամ պատմութեան մէջ տեղի է ունեցել զանազան կուլտուրաների արեելեան, հետաքրիան աւատական կուլտուրաների անկման շրջանում. տեղի է ունեցել նաև վերջին տասնամեւակներում բուրժուական կուլտուրով:

Եալբայման հողի վրայ,—գեկաղենտական ամոգերնիզմից և աֆուտուրիզմից ուղղութեանց մեծ մասը:

Առևս բուրժուական հասարակութիւնը քաշ էր զալիս եւրոպականի հոտեից, ինչպէս և մեր վատառողջ ու մեզի բուրժուազիան ինքը, որ զիտէ թառամել, առանց իսկապէս ծաղկելու:

Գեղարւեսական տեխնիկան, իր ընդհանուր և հիմնական գծերով, պէտք է սովորել ոչ թէ կեանքի բայցայման այլ կազմակերպիչներից, այլ գեղարւեսափ մեծ մշակներից,—այն զեղարւեսափ որ ծնունդ է այժմ թառամող կասակարգերի տարրեր ժամանակների ու մանաժիկներից ու կրտսերից, վերելքի և փթթման շրջանի, արմինքն զանազան ժամանակների յեղափօխական ու ոմանտիկներից և դասական արւեստագէտներից:

Իսկ վերջին ժամանակի արւեստագէտներից կարելի է ունենալ միայն մանր մունր բաներ, որոնց մէջ նրանք, նշմարիտ է, յաճախ մեծ վարպետներ են, —բայց և այդ էլ պէտք է սովորել զգուշութեամբ, լեռ նայելով, որպէսզի նրանց շփւելով՝ մարդ չիւրացնի նեխումի սերմեր:

Տիսուր է տեսնել պուտուարին, որը ձեեր է որոնում և մտածում է զտնել այն որեւէ կոտրատող ինտելիգենտ ռեկլամիս Մայակովսկու կոմ—ինչ աւելի վատ է—իդոր Սկերեանինի մօտ, որ արքոնսների, կոկետուհիների իդէսորդն է:

և որ առանդաւոր մարմնացումն է փայլուն գուեհ-կութեան։ Մենք մեծ վարպետներ ենք ունեցեր որոնք արժանի են մեծ դասախարզի համար զեղարւեստի ձեերի առաջին ուսուցիչը լինելու։

Այդ մեծ վարպետների—Պուշկինի, Լերմոն-տովի, Գոգոլի, Նեկրասովի, Տոլստովի—ձեերի պարզութիւնը, վեհառութիւնը, ամենից շատ են համապատասխանում մեր նորածին զեղարւեստին։ Ինչպիսի, նոր բովանդակութիւնն անխուսափելիօրէն մշակում է նոր ձեեր, բայց պէտք է երակէտ ընդունել ամենալաւը, որ եղել է։ Իսկ նորագոյններից էլ պէտք է ուսումնասիրել նրանց, ովքեր հոգով աւելի մօտ են և զեղարւեստորէն կայուն, բայց ո՛չ հեռաւներին ու փոփոխականներին, որոնք մերթ գալիս են, մերթ գնում, բնչողէո Անդրէևը Բալմոնտը, Բլոկը և ուրիշները։

Մեր բանուորական պոետիան առաջին բայլափախին երեան հանեց մի առանձին ձգառմ գէպի կանոնաւոր ոիթմական ուսանաւորը հասարակ յանդերով։ Այժմ նա հեղինեաէ հակում է ցոյց տալիս գէպի աղատ ոիթմերն ու բարդ հիւսւող-նոր յաճախ անսպասելի յանդերը։ Այստեղ ակներեօրէն արտարախուում է նորագոյն ինտելլիգենտական պոետիալի աղդեցութիւնը։ հազիւ թէ կարելի լինի ողջունել այդ։ Նոր ձեերն աւելի դժւար են։ Նրանց հետ պայքարն—ոյժերի աւելորդ

փատնում է, որ շեղում է գիխաւոր խնդրից՝ զեղարւեստական բովանդակութեան մշակումից ու զարդացումից։

Թող կանոնաւորութեան մէջ նոյն իսկ որոշ միակերպութիւն լինի։ Նա հիմք ունի հենց կեանքի մէջ, գործարանում բանուորն ապրում է իխտ ոիթմերի ու հասարակ աարրական յանդերի թագաւորութեան մէջ։ Գործիքների ու շարտող մերենաների «ապօղպատէ քաօսի» մէջ խաչաձեռւմ են ալիքները տարրեր, բայց ընդհանրապէս մերենայօրէն՝ նիշտ յանդերի, ընդ սմին աւելի հատուու յաճախ կրկնուազ հնչիւնների անընդհատութիւնը խաչաձեռւմ է աւելի հագւագէպ ու ծանր հնչիւններով, ինչպէս ոտանաւորի մէջ հատւածով կամ յանդով։ Այս ձախներն իրենց անվերջ կրկնուազ զարկերով կռում են բայ իրենց չափի բանաւոր պատկերներ, որոնց մէջ բանւորը իր արտիստական խառնաւածքով ձգտում է մարմնաւորել իր ապրութերը։

Եետագալում, երբ գործաւորին աւելի մատչելի կդառնան կենդանի բնութեան յանդերը, ուր թիւ են մերենալի նշտութիւններն ու կրկնութիւնները, —այդ միակերպութիւնն ինընին կհարթւի։ Բայց այդ յաղթահարել խորթ միջավայրի ու պայմանների պոետներին նմանւելու միջոցով մի աւելորդ յանդիր է, որ աւելացնում է դժւարութիւն-

ները այնուեղ, ուր առանց այն էլ դժւարութիւններ շատ կան Պատահական չեւ, որ ալդ ուզիով չի գնացել մինչաքմուայ պոետներից ամենալաւը՝ Մամորիտնիկովը:

Դեռասի պոեզիայի համար ամենադժւար ձեր—արձակ բանաստեղծութիւնն է: Հրաժարուելով լանգից և հնչիւնների բացարձակ ոիթմից, նա պահանջում է զբա փոխարէն պատկերների աւելի ևս խիստ ոիթմ և միենոլին ժամանակ նաև հնչիւնալին կապակցութեանց բաւականաչափ ներդաշնակութիւնն Այս պահանջներն շատ հեռու են պահպանւած լինելուց Ա. Գառանի «Բանւորական հարւածի պոեզիա» գործի մէջ, ուր գերակշռող տեղ են բունում հենց արձակ բանաստեղծութիւնները: Այստեղ արտայալուել է անփորձութիւնը մատաղ ստեղծագործութեան, որը հրապուրում է իր համար գեռ. ևս շատ դժւար ուզիներով թերևս հենց ալդ ուզինների իսկական դժւարութիւնները չփառակցելու պատճառով: Մեր քննադատութիւնը մեծ չափով կարող է խնայել տալ գեղարւեսական երգեր, պարզաբանելով զանազան ձևերի տակ թագնւած գժւարութիւնները.—մի խնդիր որով քիչ է հետաքրքրուում գեղարւեսի հին թէորիան:

Թէ գեղարւեսի նոր աշխատաւորներին որպան է անհրաժեշտ նրա թէորիան գիտենալը,

դրան կենդանի օրինակ կարող է ժառանիկ այն հրատարակչական թիւքիմացութիւնը, որ տեղի է ունեցել հեղսակօի «Կատասարովֆա» գրւածքի հետ: Դրբուկը «վէսպ» է անւանւած, մինչդեռ այն իսկապէս մի մեծ պատմւածք է: Այդ երկու ձեւերի տարրերութիւնը բաւական մշուշուա է բանահիւսութեան նախկին թէորիալի մէջ: մեր քննադատութիւնը համեմատաբար տւելի հեշտ ու ճիշտ կերպով կարող է պարզել ալդ: Պատմւածքում կազմակերպչական խնդրի առաջազրութն ու լուծումը միջնադէպի բնոլթ է կըում. տւեալ գէպըում հեղինակը կամեցել է մեզ ցոյց տար, թէ ծալրահեղ հարստահարման ու գործելու Անկարելիութեան պայմաններում ինչպէս է քայլայւում տարրեր կազմ ունեցազ յեղափոխական կոլեկտիվը: Եթէ հեղինակը խնդիրն առաջադրէր ու լուծէր սիստեմատիկ ձեռով—պարզաբաներ յեղափոխական կոլեկտիվի զանազան տարրերի ծագումը, ժամանակաւորապէս նրանց միացնող պայմանները, քայլայման անհրաժեշտութիւնը և, ալդ ամենը հենց ալս, բայց ոչ ուրիշ ուզզութեամբ այն ժամանակ գա վէպ կլիներ: Խնդիրը, հասկանալի է, ժաւալի մէջ չէ: Փաքրիկ վէպը կարող է մեծ պատմւածքից փոքր լինել:

Մեր քննադատութիւնը քայլ առ քայլ իր կենդանի գործով կատեղծի գեղարւեսի նոր թէո-

րիս, որի մէջ իր տեղը կդանի նաև հին քննազատութեան փորձառութեան հարստութիւնը, որը սական վերաբննած և բարձր, համակազմակերպչական տեսակէտի հիմունքներով՝ նորից սիստեմա-վերպւած կը լինի:

Հարկ է նկատել որ որոշ գեղքերում ձեր քննադատութիւնը բոլորովին անբաժանելի է բովանդակութեան քննադատութիւնից ու փաստապէս առաջինը փախւում է վերջինին: Սա առանձնապէս վերաբերում է գեղարւեստական սիմբոլների հարցերին: Այդպիսի սիմբոլը՝ կենդանի պատկեր է, որը մի շարջ ուրիշ իրէն շաղկապւած պատկերների համար իւրատեսակ նշանի, նրանց միաժամանակ և կազմակերպւած ձեռվ ի գիտակցութեան մէջ մտցնելու միջոցի տեղ է ծառայում: Այսպէս, համեմատի հօր ուրեականը սիմբոլն է ռերազործութեան խուլ արձագանքների, որոնք աստիճանաբար տարածւում են սոցիալական միջավայրում և լարտնագործում նրա գաղտնիքը: Վերհարնի «Յըշալայաներ»-ի մէջ Մհծ Քաղաքը կապիտալիստական հասարակութեան ողջ կազմակերպութեան սիմբոլն է, և այլն Բայց, որպէս կենդանի պատկեր և ոչ մի սոսկ նշան, այդպիսի սիմբոլն ունենում է նաև իր սեփական բովանդակութիւնը, որ ընդ սմին ըմբռնուում է առաջին հերթին: Մաւերը—ուրեական է, մեծ քաղաքն—ինչ որ մալրա-

քաղաք է: Այս բովանդակութիւնն ինքնին ենթակալ է զեղարւեստի բոլոր օբէնքներին ու համապատասխան քննադատութեանն եթէ, օքինակ, չամլետի հօր ուրուականն իրէն այնպէս չպահեր, ինչպէս—բայց ժողովրդական երեակայութեան—պիտի իրենց պահեն ուրուականները, - կսաացւէր կոպիտ անդեղարւեստականութիւն: Մերերիննկի «Կապոյտ Թռչունն» իր գաղափարների ողջ խորութեամբ հանդերձ մեծ երկ չէր լինի, եթէ նրա սիմբոլներն ինքնին գեղեցիկ կայուն հերթաթներ չիազմէին,—մի բան, որ այնքան գուր է գալիս երեխաներին:

Մեր քննադատութիւնը, հասկանալի է, պէտք է սիմբոլներին մօտենալ այդ կողմից, սկսելով հենց սիմբոլների ընտրութիւնից:

Մեր զաժան, բիրտ ժամանակը—ներգործական միլիտարիզմի դարաշրջանը—յաճախ գեղագէտներին զաժան ու բիրտ սիմբոլներ է թելադրում: Օրինակ, ենթագրենը, որ բանւոր հեղինակը, առանձնապէս սուր և խիստ կերպով արտադարելու համար իր անձնական բոլոր վայելքներից հրաժարւելու գաղափարը՝ յանուն մեծ կոլեկտիվ գործի, խորհրդանշում է այն՝ հերոսին սիրող ու համակրող կոչ հերոսի իսկ զէնքով կատարւած սպանութեան միջացով: Քննադատութիւնը պէտք է ասի, որ այդպիսի սիմբոլն անթուլազրելի է.

նա հակասում է հենց կոլեկտիվիզմի իդէալին. կոլեկտիվիզմի համար կինը ոչ միտին առոկ ունձնական երջանկութեան առարկայ է, այլ և նոյն կոլեկտիվի իսկական կոմ հնաբաւոր անդամք: Կամ օրինակ, հրապարաւած պոետը, կամենալրվ արտայալտել մինչև վերջ հին աշխարհի գէմ պայքարելու իր պատրաստակամութիւնը, կանդ չառնելով ոչ մի, ամենասոսկալի ու ժանր զոհի առաջ, սպառնում է.

«Յանուն մեր վաղւան – ալբենը Ռաֆայէլին, թանգարանները կործանենք, ոտնատակ անենք գեղարւեստի ծաղիկները»:

Մի ընկեր գրախօս այս առիթով ուղիղ, բաց շատ մեղմ նկատեց, որ պոետն՝ անձնատուր լինելով իր զգացմունքների լորձանքին՝ մոռացել է գեղարւեստի սոցիալական կազմակերպիչ գերի մասին: Սա – սիմբոլ է զինւորի ոգով, բայց ոչ բանւորի: Զինւորը կորող է և պէտք է ոմրակոծի Ռէյմսի տաճարը, եթէ այնտեղ դանւում է կամ, ենթագրւում են որ դանւում է, թշնամու դիտագիտական կարանք: Բայց պոետին ի՞նչն է սահմանմ ընարել ալդ չինդենբուրգիան պատկերը: Պօետը կարող էր ցաւել ալդ աստիճան դաժան անհրաժեշտութեան վերաբերմամբ, բայց չերգել այն: Երբ սաեղագործութիւնն ինքն ալգչափ լողում է հսունեն ի վալը, ալդ նրան բնաւ չի բարձրացնում

Պրոլետարը երբէք չպէտք է մոռանալ սերունդ՝ ների աշխատակցութիւնը, որ ներկալում հակադիր է գասակարգերի աշխատակցութեան, — նա իրաւունք չունի մոռանալու, որ պէտք է լարգել մեծ մեռելներին, որոնք նանապարհ են բացել մեզ համար և իրենց հոգին կտակել են մեղ, որոնք մեր իդէալին հասնելու ձգաման մէջ գերեզմանից օդութեան ձեռք են պարզում մեզ:

Գեղարւեստի ձեի, ինչպէս և նրա բովանդակութեան հարցերու մեր քննադատութիւնը պէտք է զեղագէտին, որպէս մեծ կոլեկտիվի կենդանի ոլժերի կազմակերպչի միշտ էլ լիշեցնի նրա պատասխանառու գերի մասին:

IV.

Քննադատութիւնը գեղարւեստի կեանըի կարգաւորողն է ոչ միայն նրա սաեղծագործութեան այլ և ըմբռնման կողմից, նա գեղարւեստի մեկնաղն է լայն մասսաների համար, նա մարդկանց ցոյց է տալիս, թէ ի՞նչ և ի՞նչպէս նրանք կարող են վերցնել գեղարւեստից՝ իրենց ներքին ու արտաքին կեանըը կազմակերպելու համար:

Հին աշխարհի գեղարւեստի նկատմամբ մեր ըննադատութիւնը նոյն իսկ սահմանափակւել և ալդ նպատակով նա չի կարող կազմակերպել նրա զարգացումը: Բայց մեր գեղարւեստից նրանք կազմակերպելու համար:

տի նկատմամբ թէ մէկ և թէ միւս նպատակը հաւասարապէս կենսական և աճազին են:

Այստեղ խնդիրը բնաւ միայն սիմբոլները բանալու մէջ չէ, երբ նրանք կարողեն չհասկացուել խնդիրը նաև պատկերների մէջ թագնւածը բացառելու մէջ չէ, —մի բան, որ գուցէ գեղագէտն ինքը չպիտի կարողանար իր համար նշառողէն ձևակերպել, հանել այն բոլոր եղբակացութիւնները, որ թերեւ ինքը չպիտի կարողանար հանել Թննագատութիւնները նոյնպէս մատնանշելու է և այն հարցերը, որ հանդէս են դալիս երկի հասած հետևանքների հիման վրայ, ու այն նոր հնարաւորութիւնները, որոնք բղխում են նրանից: Բայց, որ ամենակարեւորն է, քննագատութիւնը, մասսայի համար պէտք է նոր երկր մացնի դասակարգակին կուլառութայի սիստեմի, պրոլետարական աշխարհակացքը ի ընդհանուր կապակցութեան մէջ կենդանի, կոնկրետ, հետևապէտ և մասնաւոր պատկերներով, գտնէ ու ցոլց տակ համաշխարհային իմաստը, որ բացւում է համակազմակերպչական տեսակէտից:

Այստեղ է այն ճանապարհը, որի վրայ մեր քննագատութիւնն ինքը ստեղծագործութիւն է դառնում:

Ա. ԿԱՐԻՆԵԱՆ

“ՀԻՆ” ԵՒ „ՆՈՐ”

ԳԵՂԱՐԻԵՍԸ

ՄԱՏԾՆԱԳՐԱԿԱՆ ԱԿԱՐԿԱ

ՀՅԱՆ ԵՒ ԱՆՈՐՅ ԳԵՂԱՐԻԵՍՑԼ.

Դեռ ԽIX դ. երկրորդ կիսամեակին գրականութեան և գեղարւեստի լայննի պատմաբանները նկատել են, որ հասարակութեան և արուեստագետի միջն գոյութիւն ունի չափաղանց ուժեղ մի փոխարարեցութիւն:

Այդ կապը այնքան նկատելի է եղել որ գրաւել է նոյնիսկ մատերիալիզմի դէմ կռւող պատմաբանների առանձին ուշադրութիւնը: Յայտնի է, որ Եւրոպական գրականութեան և արուեստի պատմութեանը նւիրւած բոլոր ըիչ շատէ նշանաւոր հետազոտութիւնների հեղինակները ցուցագրել են հասարակական միջավայրի խոշորագոյն ազգեցւթիւնը գեղարւեստի վրայ նոյնիսկ հաճաշխարային արուեստի այնպիսի պատմաբաններ, ինչպէս Թիխարդ Մուտտէրը, Թէյնակը, Բէնուան չեն կարողացել մէկուսացնել արուեստագէտին: Իդէալիստ լինելով հանդերձ նրանք հակառակ իրենց ցանկութեան շեշտել են լաճախ զուտ ռէալիստական մամնաները: Իրապէս զրանք բոլորն էլ իրենց պատ-



5337-2010

մական հետազոտութիւնների մէջ մի աւելորդ անդամ ապացուցել են ա՛ն՝ որ ամեն մի արուեստադէա իր ուղղութիւնը միշտավայրի արդիւնքն է:

Այդպէս է եղել գրեթե միշտ:

Ամեն անդամ, երբ մի որևէ քննադատին կամ ահսարանին յանձնարարել են ուսումնասիրել և դրել արուեստի պատմութիւնը նա անհրաժեշտաբար սկսել է մատերիալիստորէն մտածել: Ալ կերպ նա չի կարողացել հասկանալ և բացասարել գեղագիտի սահմանադրծութեան արմատները: Դրանով պիտի բացատրել այն, որ գեռ XIX դ., պատմական մատերիալիզմի հետ ոչինչ առնչութիւն չունեցող պատմաբան Տէնը աւել է գեղարւեստի մատերիալիստական բացատրութեան ամենափառաւոր նմուշներից մէկը: Եատ կողմեր նա չի շնչառել շատ բան նա չի ասել—սական ամենահիմնական, ուշալիստական մոմենտը ֆրանսիստական այդ մտածողը նկատել և արձանագրել է: Այդ պատմառով Տէնի հետազոտութիւնները, նրա մի շարք դիտողութիւններն և ակնարկներն այժմէական են այժմ ևս: Ի վերջու Տէնը մի փոքր սխեմատիկ կերպով—բայց խիս գոյներով ընդգծել է այն ամենը, ինչ որ յետագալում արծարծւել է աւելի որոշ և կիրառւել է աւելի բաղմակողմանի կերպով:

Տէնը ցուցադրել է, որ ամեն մի արուեստագիտ որոշ ժամանակի և միջավայրի ինքնայտառուկ արդասիքն է:

Արուեստագիտաների ընտանիքը, կարգում ենք նրա գրքում, պարունակութեան մէջ, որ է նրան շրջապատող աշխարհը և որի հաշակը նման է նրա հաշակին: Արուեստագիտների բարքերի և մաքերի գրութիւնը նոյնն է, ինչ որ հասարակութեանը. Նրանք կղզիացած մարդիկ չեն: Միմիայն նրանց ձախնենք լսում մենք այժմ զարերի անհուն տարածութեան միջից, բայց այդ որոտագոչ ձախնի հնչիւնների մէջ, որոնք երերածով համոււմ են մեր ականչին, մենք որոշում ենք մի մրժունջ և կարծես մի համասփիւռ խուլ շշունջ, ժողովրդի անհուն և բազմազիմի վեհ ձախնը, ժողովրդի, որ ձախն էր պահում նրանց և միաձայն երգում նրանց շուրջը: Հէնց այդ ներկաշնակութիւնն էր նրանց մեծութեան պատճառը:

Ուրիշ կերպ չեր էլ կարող լինել. Ֆիդիասը, իկարինիոսը, որոնց հանճարի ծնունդն են Պարթենոնը և Օլիմպիական Բւլղիաէրը, միւս Աթենացիների նման ազատ քաղաքացի էին, և հեթանոս, կրթուած Պալեստրալում, յանախ մերկամարմին դուռնմարտած

ու վարժուած մրցախաղերում, սովոր հրապարակու մը քննել և քուէարկութեամբ վիճել հասարակուկան հարցերը, միւնոյն սովորութեանների, միւնոյն գաղափարների տէր, միւնոյն շահերով դրաւուած, միւնոյն հատակիքներով տողորուած, միւնոյն ցեղի մարդիկ, միւնոյն գաստիարակութիւնը ստոցած, միւնոյն լեզով խօսող, ախպէս որ իրանց կեանքի սմենակարեսը կողմերով նրանք նման էին ախն մարդկանց, որոնք տեսնում և գնահատում էին նրանց երկերը¹⁾։

Ալդպիսով Տէնը մատերիալիզմից հեռու լինելով հանդերձ աթենական զեղարուեստի էութիւնը վերլուծելով փաստօրէն աալիս է մատերիալիստական բացարարութիւն։

Միւնոյն արուեստի մասին աւելի մանրամասն դրել են ուստական պատմարաններ՝ Բուղեսկուլը²⁾, Ռաստօցէվը և Ֆարմակովսկին. Դրանցից առաջինն իր բոլոր ուսումնասիրութիւնների մէջ զրեթէ միշտ կապել է աթենական գրականութիւնը և արուեստը հասարակական միջավալը հետո Պրօֆ. Ռաստօցների դրել է աւելի շատ հոռմէւսկան քաղաքակրթութեան և մանաւանդ ախն հանրապետութիւնների մասին, որոնք ցըւած են եղել Մեծ ծովի ափերին, այժմեան Ռուսաստանի հարաւային նահանգ-

ներում։ Եւ ահա չս փաղանց բնորոշ է, որ այդ միանդամայն անալառ. և «սառնասիրու» պատմարանը ցուցազրել է հասարակական ուրոյն միջավալը, հասարակական-դասակարգավային ինքնալատուկ կազմակերպութեան խոշորագոյն ազգեցութիւնը ժամանակակից զեղարեւստի վրալ³⁾։

Երրորդը շեշտած հետազոտողներից իր մի ուսումնասիրութեան մէջ անհրաժեշտ է համարել մի քանի խօսք ասել գեղարւեստի միստիքական կողմերի մասին։ Սակայն այդ պատմարանն էլ հակառակ իր ցանկութեան ըննել է աթենական արուեստը, որպէս հասարակական ուրոյն կեանքի և միջավալը ինքնալատուկ արտացոլում։ Նոյնիսկ զեղագէտի երազները ըննել է նա, որպէս աթենական կեանքի արտալատութիւն։ Աթենական ամբողջ արուեստը, լիշեալ հետազոտողը, Ֆարմակովսկին համարում է աթենական ռամկավարական հասարակութեան բնորոշ մի արտացոլումը⁴⁾։

Մենք գիտաւորութեամբ կանկնեցինք այդ երեք պատմարանների վրալ, որովհետև զրանք բոլորն էլ մատերիալիստական պատմահայեցողութեան հակառակորդներ են։ Մեր կարծիքով այն էլ բնորոշ է որ նոյնիսկ մեր օրերու մ բուրժուազիալ հետ կապւած գիտնականները ուսիւս ած են շեշտել ախպիսի

մոմենտաներ, որոնք գտվիս են նորից հիմնաւորելու դիալեկտախական մատերիալիզմը:

Իհարկէ այդ հետազօտողների մէծամասնութիւնը չի վստահացել հետեղական կերպով բացատրել և վերլուծել գեղարւեսափ հասարակական բնութը: Դրանք բոլորն էլ—և ամենից առաջ հէնց միւնան Տէնք խօսել են աւելի շատ և աւելի մանրամասն «հասարակական միջավայրի» մասին: Դրանք միշտ խուսափել են մերկացնել «հասարակութեան» դասակարգային կազմը և ցուցադրել դասակարգային ուրախ կենսահայեցողութեան ազդեցութիւնը գեղարւեսափ վրայ: Սակայն իրավէս նախիսկ իրենց անսրաշ ակնարկներով դրանք միշտ ցուցադրել և ապացուցել են գեղարւեսափ «հոգեղէն» և հասարակական դասակարգային բնութը: Երբ Տէնք կամ Մրօմանատէնը (իր յալանի «Ճին արուեստագէտներ»⁵) աշխատութեան մէջ) խօսելով Ֆլամանդական արուեստի մասին տկնարկում են, որ այդ արուեստը կապւած է առեւտրական ճոխ երկրի կենսուրախ բնակիչների կենսահայեցողութեան հետ—արդէն այդ դիտողութիւնները բաւական են: Աւշադիր ընթերցողը ինքը կարող է և պէտք է տեղեկանակէ՛ հասարակական ո՞ր խմբակցութիւնն է իշխել

չոլանդիոյում կամ Ֆլանդրիայում և ուժ տհնչերն են արաացուել հին արուեստագէտների մօտ:

Մի բան մենք երբէք չպիտի մոռանանք: Ուրուեստագէտը չի լուսանկարում կեանքը, այնպէս ինչպէս որ նա է: Նա որոշ չափով փոփոխում է, գեղազարդում կամ կոշտացնում է կեանքի պատկերները: Նա որոշ սուրբիկափու կնիք է զնում իր դործի վրայ: Տէնց զբանով էլ աարբերում է ուրուեստը մեքենաբական բնդորինակութիւնից, Փօտողբաժիափից:

Պէտքամը միշտ միօրինակ և միակերպ է արտանկարում Փօտողբաժիական պատկերներում: Մովքը, անտառը կամ լիակը չեն գունաւորում ամենաքին սուրբիկափու, անհատական տօներով:

Այնինչ գեղարւեստական ստեղծագործութեան մէջ մենք նկատում ենք միանդամանի հակառակը: Գեղագէտը արտանկարում է կեանքը իր սուրբիկափու ապաւորութեան պրիզմալի միջով: Նա փոփոխում է կեանքը իր արամազդութիւնների և կենսահայեցողութեան համեմատ: Ահա ինչու միւնայն պատմական էպոփիան տարբեր կերպ և տարբեր դոլներով է նկարագծում զանազան գեղագէտների երկերում:

Հին հասմի մասին դքել են Սկանկիվիչը և

Փրանսիական հեղինակ՝ Փան Լոմբարդ: Երկուսն էլ մեծ ուշադրութեամբ քննել և ուսումնասիրել են հոռմէական անցեալը, աշխարհադրական և հասարակական միջավայրը: Չնալած դրան երկուսի վեպերը միանդաման տարբերում են միմիանցից: Սենկեվիչի ուրոյն հասարակական—դասակարգավին կենսահայեցաղութիւնն որտացուել է շատ որոշ Ընթերցողի համար շատ պարզ է, որ հոռմէական անցեալը տարբեր կերպ է ըմբռնել և արձանադրւել երկուսի կողմից էր:

Վերջնենք ժամանակակից գրականութիւնը: Խուսական կեանքի պատկերներ տւել են Լէօնիդ Անդրեևվը և Մաքսիմ Գորկին: Երկուսն էլ շեշտել են չափազանց մուզլ գրուազներ և էշեր: Անդրեևը իր „Բեզմա“, „Քաչակ օ Սերգե Պետրովիչ“, „Ժիզն Վасилия Թիվեյսկаго“ վիպակներում, ամենադաժան գոյներով է նկարել կեանքը: Մաքսիմ Գորկին իր „Փомա Գործեա“, „Հա ձն“, „Գործոկ Օկորօ“ և „Դետստվո“-ի մէջ նոյնպէս շեշտել է ուսւական միջավայրի ամենադաժան և մուզլ կողմերի վրայ:

Սակայն երկուսի մօտ էլ տարբեր են զոյները, խօսքերը, նկարագրութեան ամբողջ ձեր և մէթոդները: Իւրաքանչիւրի համար չափազանց ակներե է,

որ երկու հեղինակներն իւրակերպ են մօտեցել մայրէնի իրականութեան: Եւ ընթերցողը միշտ զգում է, որ Անդրեևվը ստեղծում է լոկ յուսահատ և յուսեսական մտահալեցողութիւն—ալինչ Գորկին իր նոյնիսկ ամենամռազլ զրուազներում միշտ երեւում է, որպէս պալքարող և կեանքի ալրանդակութիւնների դէմ մարտնչող:

Այդպիսով ամեն մի հեղինակ իր սուրբէկաթւ, իր անհատական լոկերի կնիքով զունաւորում է իր ստեղծագործութիւնը: Սակայն նրա այդ լոկերն և ուրոյն կենսահայեցաղութիւնը հողից և իրականութիւնից կարւած չեն: Ալրաեղ տեղին է լիշել այն, ինչ որ վերը շեշտւեց: Իւրաքանչիւր հեղինակին թւում է, թէ նա «անկախ» է հասարակութիւնից, թէ նա միանդաման առաջաւ ստեղծագործող է: Սակայն այդպէս չէ իրապէս: Փաստօրէն ամեն մի դեղագէտ կապւած է թէ՛ իր ժամանակի և թէ՛ հասարակական այս կամ այն խմբակցութեան: Նետ Փաստօրէն նա արտացոլում է որոշ խմբակի կամ գասակարդի կենսահայեցաղութիւնը: Դրանով պիտի բացատրել ա'ն, որ որոշ պատմական մօմենտին գեղարւեսաի զանազան նիւղերում շեշտւում են միւնոյն մօտիւներն և տօները:

Պատմական չէ ամենեին այն, որ ուսւական

նարոգնիկական հոսանքը ունեցել է իր ուրոյն արացողութը ոչ միայն դեղարւեստական դրականութեան, ալլ նաև նկարչութեան և նոյնիսկ երաժշտութեան մէջ։ Պատահական չէ ամենեին այն, որ Վրուբէլի հետ միաժամանակ դործել են Յաղը Բէլին և Սկրեարինը։ Եւ ալդպիսի օրինակներ շատ կարելի է բերել նաև ժամանակակից եւրոպական դրականութիւնից և կուլտուրալից։

Ազդ բոլորը մի աւելորդ անգում ցուցազրում և ապացուցանում է՝ որ ամեն մի հեղինակի «անհատական» լուզերը կապւած են իրականութեան հետ։ Վիպագիւր նկարագրում է, պոետը երգում է, երաժիշտը նւագում հասարակութեան ապրութեանը։ Յաճախ գեղագիտը սխալ է բմբռնւում կամ անժամանակ է լինում։ Սցրպէս էր օրին, ուսւսական կօմ սկզբանը Մուսօրգսկին, որ լիսվին բմբռնւել է մի-միայն յետագայ շրջանում։ Յաճախ հեղինակը տարբեր կերպ է բնոդունւում տարբեր էպիխաներում։ Սցրպէս է խոպանական սեծ հեղինակ Սկրիֆանտէսը, որն իր ժամանակ դրել է սովորական մի վէպ, որ նպատակ է ունեցել խորազանել ռասպետական» վէպերը։ Սակայն յետագայում ծիծաղելի և զաւեշտական Դոն կիխօսք լմբռնւել է ալլ կերպ։ Խոպանական սեծ գեղագիտի հերսոր

դառել է տխուր իդէալիստ-պալքարողի նւիրական մի սիմվոլ կոշտ և յետամնաց իրականութեան դէմ կուող և ապագայի համար մարտնչող անձնւէր մի տապեաի նկարագիրը...

Ահա ինչու մենք կարող ենք ասել որ նոյնիսկ հին էպօխաների գեղագիտները և հին արուեստի ներկայացուցիչները կարող են մօտ լինել նաև մեր ժամանակին։ Նոր արուեստը չի կարող միանդամայն առանձնանալ և կտրւել «հին» արուեստից։ Նաոչ միայն պիտի օդաւի անցեալի փորձերից, տեխնիքական աւելներից—ալլ նաև պիտի օդտագործէ նոր մօմենտի և նոր կենսահայեցողութեան համաձայն հին արուեստի հարսւոտ կողմերը։ Փաստօրէն ալդպէս էլ լինելու է, որովհետեւ երբէք և ոչ մի արուեստագիտ չի կարող ստեղծագործել առանց հին փորձւած ուսուցիչների։ Նա չի կարող չոդուել հին փորձից, հին աւելաներից—այն ամենից, ինչ որ ստեղծել են արբեր հասարակական խմբակցութիւնների երկար փոխարարերութիւնների ընթացքում...

Այնպէս, ինչպէս ներկալում օդտագործւում են մեխանիկալի և տեխնիկալի «հին» փորձերն և տւեաները նիշտ ալդպէս պիտի օդտագործւեն նաև անին» արուեստի այն բոլոր նմուշներն, որոնք կա-

րող են նպաստել նոր գեղարւեատի կազմակերպմանը: Իսկ այդպիսի նմուշներ կարող է տալ ոչ միայն գեմոկրատական Աթէնքի «արտեռաբ»: այլ նաև կապիտալիստական էպօխալի քալքարող «հին արուեստը»:

II.

Կապիտալիստական հասարակութեան մէջ արուեստի ճգնաժամը կապւած է: ամենասերտ կերպով հասարակական-տնտեսական համայն կուլտուրայի քալքարման և անկման հետ: Տարրալուժման պրոցեսը փաստարէն սկսւել է զեռ անցեալ դարեշրջանի երկրորդ կիսամեեակից:

Մեծ Թրանսիական Յեղափոխութիւնը պալքարող և մարտինչող բուրժուազիայի գործունեութեան ամենափայլուն ցուցանշանն էր: Դրանից յետու, յետադալ քաղաքական մեծ յեղաշրջութերի ընթացքում, մանւանդ 1848 թւականին «երրորդ դասը» շի վստահացել այս պաշտապանել իր յեղափոխական և մտտերիալիստ նախորդների աւանդը:

1848 թւին հանդէս է եկել հէնց յեղափոխական շարժութերի պրոցեսում կուպիտալիստական հասարակութեան մեծ գերեզմանափորբ-պրոլետարիատը:

1848 թւին հին, մահացող և մեանող բուրժուական հասարակութեան հանդէս մառացել է կարմիր կոմմունիզմի ու բուականը: Արդէն այդ ժամանակ բուրժուազիայի համար ակներև էր, որ յեղափոխական շարժութերի ամենամեծ գործօնը՝ բանւոր գասակարգը լինելու է սեփականատիրական կարգերի ամենավճռաւական ախոյեանը: Բուրժուական իդէոլոգիների համար պարզ էր նաև ա'ն, որ յեղափոխական պալքարը ընդդէմ կալւածատիրական աբսոլիւտիզմի ի վերջոյ կարագացնէ պրոլետարական-դասակարգային շարժութերի թափը: Ահա ինչու հէնց 1848-ից սկսւում է բուրժուազիայի քաղաքական դարձացման նոր շրջանը:

«Երրորդ դաս»-ի փոխարէն ասպարէզում սկսում է իշխել իր մատերիալիստ հայրերից հեռացած սարսափահար բուրժուան: Բուրժուազիան չէր կարող այս ոգեսորեւել մատերիալիստական իմացականութեամբ, բէտիլիստական տեսութիւններով և յեղափոխական քաղաքականութեամբ:

Մատերիալիզմը դառնում է նոր հասարակական գասակարգի հաւատամքը:

XVIII դարի արմատական գործիչների և իմաստասէր մտածողների՝ Օլբախի, Դէ Լամեարիի, Դիցրոի մատերիալիստական գաղափարներն օգտագործ-

Նել են ամենից առաջ պրոլետարական իդէօլոգների կողմից: Եւ հէսց նոր զասակաբդի ներկայացուցիչներն ել մշակել են դիալեկտիական մատերիալիզմի այն հուժու և երկաթէ ուսմունքը, որը հակագրւել է իդէալիստական աշխարհակեցողութեանը: Խոկ կոտղիտափիստական հասարակութեան տիրակալը՝ բուրժուազիան հրաժարւելով իր յեղափոխական հալքերի ժառանգութիւնից աստիճանաբար ստեղծել է իդէալիստական տեսութիւնների պաշտպանների սոււրազոյն մի շարան: Դրանով սիտի բացաարել իդէալիզմի հսկայական ազդեցութիւնը բուրժուական կարգերում: Նա, ով հետեւ է ժամանակակից զիտութիւնների և իմաստասիրութեան էվոլյուցիալին անշուշանկառ է խոչըրազոյն և սիմպաոմատիքական այդ երկութքը: Իդէալիզմի ազդեցութիւնից կարողացել են աղատւել միայն մի քանի աւելի խիզախ, ուժեղ և խորակեացը զիտակականներ:

Ժամանակակից զիտութեան դրեթէ բոլոր հիւզերն ել ենթարկել են իդէալիզմի այդ ազդեցութեանը: Հասարակազիտութեան մէջ՝ Արկիերադ, իրաւագիտութեան մէջ՝ Պետրամիցիին, քաղաքատնտեսութեան մէջ՝ Տուգան Բարանովսկին, իմաստասիրութեան մէջ՝ Բերդոսնը զանազան վարիա-

ցիաներով և ձեակերպութերով արտադադակ են (ժամանակի ողբին): Նոյնիսկ ամենազրական (սոցիալիզմ) զիտութիւնները՝ քիմիան, մատէմատիկան և Փիզիկան չեն կարողացել աղատւել իդէալիզմի կապանքներից: Նորագոյն բնագիտութեան ամենախոշոր տեսաբաններից մէկը՝ զերծանացի Վիլհ. Օստվալդը իր բնա-փիլիսոփական տեսութիւններով ապացուցել է գա ամենաբնորոշ կերպով: Աւելի ևս նշանակալից է այդ տեսակետից ուսւական յայտնի բնագէտ պրօֆ. Խովոսնի էվլիցիան: Երկար տարիների բնթացքում այդ գիտնականը դասաւանդելով Պետերբուրգի համալսարանում Փիզիկայի դասեր միշտ հիմնաւորել է որոշակի ուշաբնտական մի աշխարհակեցողութիւն: Սակայն պատերազմի նախօրեակին, այդ միենոյն ուշաբնտականը վրիպելով պօդիտիւ գիտութեան ուղիից մի զատախօսութեան մէջ անհրաժեշտ է համարել պաշտպանել «հաւատիք մեծ նշանակութիւնն և արժէքը կարծես գիտաւորութեամբ, Խովոսնը լետագոյաւմ հրատարակել է այդ դասախօսութիւնն առանձին զորովիով⁶⁾:

Մեզ համար ակներե է, որ բոլոր այդ թերութերը փաստօքէն արտացոլում են կապիտալիստական հասարակութեան տիրող աարրերի լու-



սահատութիւնն և լոռետեսութիւնը: Իդուր չէ
մուգ. Շտաբնէրը՝ ժամանակակից տէօսօֆիայի հզո-
րաւոր ալդ մոդղեար զրաւել նորադոյն ինտելիի-
գենցիայի ուշադրութիւնը: Իր վիրացական-իդէա-
լիստական մտահանեցողութեամք, իր վերամբարձ,
լանախ անհասկանալի և խառնիծաղանե միութիքա-
կան շաղակրատութեամք Շտաբնէրը հարազատօրէն
արտայալտում է մահացող հասարակութեան ժայ-
րաշեղ լոռետեսութիւնը:

Ալդպէս է ժամանակակից գիտութեան կացու-
թիւնը: Սակայն աւելի ևս ուժիղ ազդեցութիւն
սարսափահար բուրժուազիայի հոգերանութիւնը
թողել է գեղարուեստի բնագաւառում: Բուրժուա-
կան քաղաքակրթութեան անկման պրոցէսը տար-
բեր գոյներով և տարբեր կերպ արտացոլել է հա-
մայն գեղարուեստի մէջ:

Տարբեր պօէտներ, երաժիշտներ, նկարիչներ և
գեղագէտներ զանազան ժամանակ և ամենատարբեր
գոյներով արձանագրել են բնդհանուր լուսահասու-
թիւնն և առգնապր: Յիշել այստեղ օրինակներ,
կրկնել այստեղ զանազան հեղինակների և դործիշ-
ների անուններ կլինէր աւելորդ և ապարդիւն: մի
աշխատանք: XIX դարի ամբողջ գեղարուեստը հա-
մակւած է ալդ տրամադրութեամք:

Սակայն մի բան միայն կարեւոր և անհրաժեշտ
է շեշտել:

Սիալում են նրանք, որոնք կարծում են, թէ
ակնարկած բոլոր գործերը կապւած լինելով կապի-
տալիստական միջավայրի հետ անհրաժեշտաբար
էրում են նաև բուրժուական մտածողութեան և
կուլտուրայի մէխանիքական ազգեցութիւնը: Սիալ-
ում են մանաւանդ նրանք, որոնք բաւականանա-
լով ընդհանուր էպիտեաներով միշտ և ամենուրեք
որոնում են բուրժուազիայի դասակարգալին հոգե-
բանութեան սիեմատիկ արտացոլումը:

Իդէօլոգայի բարդ ձեերի կապը հասարակական
միջավայրի հետ անքան էլ միակերպ չէ,
ինչպէս կարծում են շատերը: Խօսելով մարքսիզմի
վուլգարիզատօրների մասին ուսւական մարքսիզմի
նախահայրը՝ Գ. Պէխանօվը շեշտել է առանձնա-
պէս, որ ամեն մի ինաստատէր լինելով որոշ միջա-
վայրի և էպօխայի արդասիք չի արտայալտում այնու-
ամենանիւ ալդ միջավայրի ազդեցութիւնն անմի-
ջապէս և չի արտացոլում անպատճառ մի որևէ
դասակարգի բոլոր լատկութիւնները:

Մեզ թւում է, որ հէնց ալդ գիտադութիւն-
ներից էլ պարաւոր ենք մենք ելնել ահին գեղա-
րուեստից գնահատութեան համար:

